31 ՅՈՒՆՈՒԱՐ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 8(5091)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Ինչո՞ւ է լռում Իլհամ Ալիեւը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Հունվարի 24-ին Բաքվում ԱՄՆ դեսպանատունը հանդես էր եկել հայտարարությամբ, որով Միացյալ Նահանգների քաղաքացիներին զգուշացնում էր Ադրբեջանում «հնարավոր բախումներից»: Նույն բովանդակությամբ հորդոր իր երկրի քաղաքացիներին էր հղել նաեւ Մեծ Բրիտանիայի դեսպանատունը: Նույն օրը Բաքվից 190 կմ. հեռավորության Իսմայիլի շրջկենտրոն էր մտցվել ՆԳՆ ներքին զորքերի «արագ արձագանքման» գունդը՝ զրահատեխնիկայով եւ ոստիկանության մոտո-մեքենայացված ջոկատներով հանդերձ: Առ այսօր պատժիչ ուժերը, ինչպես նաեւ ԱԱ նախարարության հարյուրավոր աշխատակիցներ, գտնվում են Իսմայիլիում եւ հարակից շրջաններում՝ այսպես կոչված Լեռնային Շիրվան տեղաշրջանում:

Ուշագրավ է, որ կատարվածի հանդեպ բավական օպերատիվ եւ սուր էր Բաքվում ԱՄՆ նախկին դեսպան Ռիչարդ Կոզլարիչի արձագանքը: «Թուրան» գործակալությանը նա բառացիորեն հետեւյալն է ասել. «Այդ անկարգությունները, ինչպես եւ մեկ տարի առաջ Ղուբայի անկարգությունները մարդու իրավունքների խախտումներից եւ կոռուպցիայից ժողովրդի դժգոհության ինդիկատոր են: Նման իրավիճակ է եղել Չինաստանում, որտեղ չինովնիկների ամենաթողությունը հանգեցրել է նման անկարգությունների»:

contact.az-ի տեղեկագրմամբ, Բաքվում Միացյալ Նահանգների դեսպանատան կայքէջում երեկ հայտնվել է հետեւյալ բովանդակությամբ հաղորդում. «Մենք տեսել ենք տեղեկություններ հունվարի 24-ին Իսմայիլիում անկարգությունների մասին, որոնք ավարտվել են սեփականության ոչնչացումով՝ ներառյալ մասնավոր հյուրանոցի եւ գործադիր իշխանության շենքի հրկիզում: Հունվարի 26-ին ոստիկանությունը Բաքվում ցրել է ի աջակցություն Իսմայիլիի բնակչության ցույցը, տասնյակ մասնակիցներ ձերբակալվել են: Ավելի վաղ Բաքվում եղել է եւս երկու բողոք. մեկը՝ առեւտրականների իրավունքների խախտման եւ վարձավճարների բարձրացման, երկրորդը՝ բանակում զինվորների մահվան դեմ: Մի շարք դեպքերում հաղորդվել է, որ իշխանությունները օգտագործել են արցունքաբեր գազ եւ ռետինե գնդակներ՝ ցուցարարների ցրելու համար:

Մենք ափսոսում ենք Իսմայիլիում բռնության համար եւ միաժամանակ Ադրբեջանի իշխանությունների եւ նրա քաղաքացիների միջեւ լուրջ երկխոսության ենք կոչում՝ օրինական պահանջներին պատասխան գտնելու նպատակով եւ իշխանություններին հորդորում ենք հարգել քաղաքացիների հավաքի եւ արտահայտվելու իրավունքը»:

Սա, անշուշտ, Սպիտակ տան «հորդորն» է, որի հասցեատերը Իլհամ Ալիեւն է: Այստեղ երկու կարծիք լինել չի կարող. Վաշինգտոնը խորհուրդ է տալիս «հարգել քաղաքացիների հավաքի եւ արտահայտվելու իրավունքը»: Այսինքն, Ադրբեջանում այդ իրավունքը չի հարգվում՝ գտնում է ԱՄՆ կառավարությունը եւ մատնանշում փաստեր:

Դիտարժան է, որ նույն օրը Իսմայիլիի դեպքերի առթիվ համատեղ հայտարարություն են տարածել Ադրբեջանի ՆԳՆ-ն եւ դատախազությունը:

Տես էջ 2

# Բնակչության կեսը թեկնածու չունի, բայց նրան ամեն բան դեմ մի տվեք

ԱՐՏԵՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**Ընտրարշավի առաջին տասնօրյակն է բոլորում, եւ գլխավոր խնդիրը, այն է՝ հետաքրքրություն արթնացնել ընտրողի մեջ հանդեպ նախագահական ընտրությունները, կարծես թե մի փոքր լուծվում է՝ անկախ նրանից, թե քաղաքական ուժերից ով ինչ կցանկանար: Ընտրություններին չմասնակցող կուսակցությունների՝ ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի եւ անգամ ՀԱԿ-ի կողմնակիցների որոշ հետաքրքրվածություն կա՝ սա կարելի է նկատել այն մարզերում հատկապես, որտեղ առաջին երկու կուսակցություններին հարող մարզային ղեկավարներ կան, կամ հիշյալ քաղաքական ուժերի ազդեցությունը մեծ է: Օրինակ բերենք Կոտայքի մարզը, որտեղ ՀՀԿ թեկնածու-գործող նախագահը հազիվ թե խնդիրներ ունենա, քանի որ ամեն ինչից պարզ երեւում է, որ ավանդաբար ԲՀԿ-ի ազդեցության այս գոտում նախագահ Սարգսյանին աջակցելու շարժեր են իրականացվում: Ստացվում է, որ թեկնածու չառաջադրած ուժերի ընտրողները տարբեր պատճառներով հետաքրքրված են ընտրություններով:**

**Մյուս հետաքրքրությունն առաջացրեց Անդրիաս Ղուկասյանը, որը, չնայած իր սկզբնապես անհասկանալի պահանջին, կարողացավ իր շուրջը ռեզոնանս ստեղծել ու անգամ նախագահի այլ թեկնածուների տրամադրել իր օրինակը թեկուզ կարճաժամկետ կրկնելու, այսինքն՝ հացադուլ անելու: Նա թեեւ անվճար եթերի իր ժամանակն անձամբ չի օգտագործում, սակայն իր կողմնակիցներին է ուղարկում եթեր, ու նրանք շատ արդյունավետ օգտագործում են եթերն իրենց տեսակետները տարածելու համար: Չնայած՝ ի վերջո անհասկանալի է, թե ի՞նչ է ուզում նա, քանի որ իր հիմնական պահանջը նա կարող էր ամիսներ առաջ դնել՝ որեւէ քաղաքական շարժում ձեւավորելով: Ուրեմն հե՛նց նախագահական ընտրություններն է նա գործածում ճանաչելի դառնալու եւ հետագայում այդպիսի ուժ ձեւավորելու համար: Չնայած՝ չի բացառվում, որ նրան, ինչպես եւ այլ թեկնածուների, պարզապես խնդրել են առաջադրվել՝ տարբեր նպատակներ հետապնդելով:**

**Բավական նայվում է Րաֆֆի Հովհաննիսյանը, չնայած քաղաքական շրջանակների համար նա վաղուց որեւէ գաղտնիք իրենից չի ներկայացնում՝ քաղաքական մեծ ռեսուրս չունենալու կամ նախկինում ունեցածը վատնելու պատճառով: Սակայն զուտ մարդկային, անհատական շփումների առումով նրա կերպարը իր ամենօրյա հանդիպումների արդյունքում ավելի բարենպաստ շտրիխներ է ստանում. սովորական մարդիկ միշտ էլ սիրում են, որ նրանց մարդաստեղ են դնում, հավասարը հավասարին զրուցում եւ ոչ թե վերեւից անհասկանալի բառակույտեր թափում նրանց վրա: Հետաքրքրական է, թե փետրվարի տասնվեցին նրա ծրագրած հանրահավաքին քանի՞ մարդ կգնա:**

Տես էջ 2

# Ջոն Քերրին հաստատվեց պետքարտուղարի պաշտոնում



**ԱՄՆ Սենատը նախորդ օրը հաստատեց պետքարտուղարի պաշտոնում սենատոր Ջոն Քերրիի թեկնածությունը, եւ արդեն փետրվարի մեկից Ջոն Քերրին կստանձնի պետքարտուղարի պարտականությունները:**

**Ամերիկայի հայկական համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունին նշում է, որ Ջոն Քերրին Միացյալ Նահանգների Սենատում 29 տարիների իր աշխատանքի ընթացքում հիմնովին ուսումնասիրել է Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի խնդիրները: «Մենք ակնկալում ենք, որ որպես պետքարտուղար նա կշարունակի հավատարիմ մնալ իր տեսակետին», հավելում է Բրայան Արդունին:**

**Սենատում իր պաշտոնավարման ընթացքում Քերրին համահովանավորել է Հայոց ցեղասպանության բազմաթիվ բանաձեւեր, նշանակալից դեր է խաղացել Ազատության ակտի 907-րդ ուղղումն անցկացնելու մեջ, ըստ որի ԱՄՆ-ը ֆինանսական աջակցություն չէր տրամադրելու Ադրբեջանին, մինչեւ «բացահայտ քայլեր չկատարի Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ շրջափակումը վերացնելու ուղղությամբ»: Քերրին նաեւ աջակցել է հումանիտար միջանցքի ակտի անցկացմանը, նպաստել Միացյալ Նահանգների ու Հայաստանի միջեւ մշտական բարելավված առեւտրային հարաբերությունների հաստատմանը եւ Հրանտ Դինքի մասին օրինագծի անցկացմանը:**

# Նախընտրական ավետարան ըստ Toto-ի

Երգիծելու շատ բան կա այս օրերին, նկատի ունենք նախագահական... նախընտրությունները: Եվ, բնականաբար, մեր տաղանդավոր երգիծանկարիչը՝ Toto-ն, չէր կարող անտարբեր մնալ: Սակայն, տեղի տալով երգիծելու մեծ գայթակղությանը, այս անգամ նա խմբագրությունից պահանջեց թերթի մի ամբողջ էջ, էջեր: Տեղի տվեցինք նաեւ մենք եւ ներկա համարի 5-րդ էջը ամբողջապես տրամադրում ենք նրան, նկատի ունենալով նաեւ այն հանգամանքը, որ այս համարով հայաստանյան օրաթերթային պատմության մեջ սկիզբ է առնում միջազգային մամուլում լայն տարածում ունեցող կոմիքսային երգիծանկարչությունը: Եվ սա չի լինելու առաջինն ու վերջինը: Երգիծանկարչի ստեղծած երկու կերպարները՝ միշտ խնդումերես Խնդոն եւ միշտ մռայլ Մռոն, պարբերաբար իրենց արկածներն ու խորհրդածությունները կներկայացնեն ընթերցողներին:




# 2012-ին մարդու իրավունքների ոտնահարման 21 հազար դեպք Թուրքիայի արեւելյան շրջաններում

Այս ոտնահարումներն արձանագրված են Մարդու իրավունքների միության Դիարբեքիրի մասնաճյուղի «Արեւելյան եւ Հարավարեւելյան Անատոլիայում մարդու իրավունքների ոտնահարման» 2012 թվականի զեկուցագրում: Խախտումների ստույգ թիվը 21 հազար 107 է, իսկ զեկուցագիրը հրապարակվել է հունվարի 29-ին վերոհիշյալ միության Դիարբեքիրի մասնաճյուղի շենքում հրավիրված մամուլի ասուլիսում, որտեղ լրագրողի հարցերին պատասխանել են Մարդու իրավունքների միության Հարավարեւելյան Անատոլիայի շրջանի ներկայացուցիչ Շելքեթ Աքդեմիրն ու Դիարբեքիրի մասնաճյուղի ղեկավար Ռաջի Բիլիջին:

«Էվրենսել» կայքէջի վկայությամբ՝ Բիլիջին ասել է, որ 2012-ին արեւելյան եւ հարավարեւելյան շրջաններում, որոնք, ի դեպ, մեծապես քրդաբնակ են, քաղաքական զարգացումների վրա իր կնիքն է թողել անվտանգության ուժերի եւ PKK-ի միջեւ ծավալվող ռազմական գործողությունների ակտիվացումը, դա հատկապես նկատելի է դարձել ամռան ամիսներին եւ գրեթե ամբողջությամբ ներառել է նշված շրջանները, այսպիսով պատերազմի մեջ է ներքաշել ողջ երկիրը:

Դիտարկելով պատերազմի հանգեցրած ռազմական գործողությունները մարդու իրավունքների ոտնահարման դրսեւորում, Բիլիջին ընդգծել է, որ անցյալ տարի ոտնահարումներն առավելապես արձանագրվել են կալանավայրերում: Նրան հավելել է Աքդեմիրը: Նա նշել է, որ 2012-ին մարդու իրավունքների ոտնահարումները նշված շրջաններում նախորդ տարվա համեմատ զգալի աճել են: Ինչ վերաբերում է զինյալ բախումներին, ապա Աքդեմիրը դրանց վերաբերյալ նշել է. «Անցյալ տարի, ինչպես արձանագրված է զեկուցագրում, բախումների հետեւանքով սպանվել են 237 զինծառայող ու ոստիկան, 459 վիրավորվել են: Նույն ժամանակահատվածում սպանված PKK-ականների թիվը 284 է, 11-ը՝ վիրավոր:

Զեկուցագրում որպես մարդու իրավունքների ոտնահարման դրսեւորում նշված են. չբացահայտված եւ առանց դատաստանի իրագործված սպանության 56, կասկածելի սպանության 23, զինծառայողների ինքնասպանության 11, կանանց ինքնասպանության (կալանավայրում) 41, տղամարդկանց՝ 45, անչափահասների՝ 20, ձերբակալության 4418, կալանքի 1475, խոշտանգումների 876, քաղաքական կուսակցությունների, արհեստակցական միությունների, հասարակական կազմակերպությունների եւ մշակութային հաստատությունների փակման 12 դեպքեր:

Այդ ընթացքում կալանավայրերում մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի թիվը հասել է 3 հազար 263-ի:

Հ. Չ.

# Ովքե՞ր են զբաղվում «բայղուշությամբ»

Գործունեության հնգամյակի կապակցությամբ երեկ «Երեւան» հյուրանոցում «Սիվիլիթաս» հիմնադրամը կազմակերպել էր հանդիպում-քննարկում՝ ամփոփելով ու գնահատական տալով 2012-ին: «Հայաստան 2012. ընտրության տարի» տարեկան զեկույցը ներկայացնում է Հայաստանի եւ տարածաշրջանի իրադարձությունները ու խնդիրները: «Սիվիլիթասի» մասնագետները խնդիրները վեր հանելուն զուգահեռ նեկայացնում են նաեւ դրանց լուծման տարբերակներն ու զարգացումները: Բացի զեկույցի հրապարակումից՝ երեկ հիմնադրամը կազմակերպել էր քննարկում: Ըստ նախկին արտգործնախարար, «Ազատ դեմոկրատների» անդամ, ԱԺ պատգամավոր **Ալեքսանդր Արզումանյանի**՝ անցնող տարին հետաքրքրական չէր արտաքին հարաբերությունների ոլորտում: Արցախի հիմնախնդրի հետ կապված էլ ոչ մի փոփոխություն չեղավ, որովհետեւ առանցքային երկրներում ընտրական գործընթաց էր: Տարին ճակատագրական էր Վրաստանի համար, որտեղ իշխանափոխություն տեղի ունեցավ, եւ Սիրիայի համար, որը շարունակում է մնալ խոցելի: Արզումանյանի խոսքերով՝ մեր մեծագույն սխալն այն էր, որ Սիրիային օգնության ձեռք մեկնեցինք միայն երկրի ներսում ողբերգական դեպքերից հետո:




**Հովհաննես Իգիթյանի** գնահատմամբ էլ՝ հասարակությունը հիասթափված է հատկապես խորհրդարանական ընտրություններից հետո, որովհետեւ ԱԺ-ում ընդդիմության խոսքն այնպես չի հնչում, ինչպես փողոցում:

Անդրադառնալով նախագահական ընտրություններին՝ Ալեքսանդր Արզումանյանը չառաջադրվող կամ որեւէ թեկնածուի չսատարող կուսակցություններին ու գործիչներին անվանեց «բայղուշությամբ» զբաղվողներ: Հետաքրքրական է, որ նույն Արզումանյանի կուսակցությունը, որ խորհրդարան է մտել բացառապես Րաֆֆի Հովհաննիսյանի եւ «Ժառանգության» շնորհիվ, մի քանի օր առաջ հայտարարեց, որ ընտրություններին չի սատարի ո՛չ Րաֆֆուն, ո՛չ որեւէ ուրիշի:

Հ. Հ.

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏ

# Բնակչության կեսը թեկնածու չունի, բայց նրան ամեն բան դեմ մի տվեք

*1-ին էջից*

**Անկախ դրանից, եւ անկախ այն բանից, թե մարդիկ ձայն կտան Րաֆֆուն, թե՝ ոչ, «Ժառանգության» առաջնորդը խորհրդարանական ընտրություններին իր համակիրների մի մասի կորսված վստահությունը փորձում է վերադարձնել:**

**Չնայած սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանը կարծում է, որ Նոյեմբերյանում եւ Եռաբլուրում նախագահ Սարգսյանի որոշ կոշտ ձեւակերպումները դիսկուրսի են բերում ու դրական ազդում քարոզարշավի ընթացքի առումով, քանի որ «Մոռացությունը մահ է», սակայն կարծում ենք, որ նախագահի ընթացիկ պարտականություններն ու քարոզարշավի հոգնեցնող ընթացքը լարվածության աղբյուր են քարոզարշավն ինչպես միշտ միայնակ տանող Ս. Սարգսյանի համար, եւ նա հարկ է հնարավորինս վերահսկի իր խոսքը՝ ակամա նյութ չտալու համար իր մրցակիցներին: Պետք է ասել, որ նրա այս քարոզարշավը առանձնապես նոր մեթոդներ չի ներառում, այլ կրկնում, միգուցե բյուրեղացնում է առաջներում արդեն փորձարկվածը: Սակայն ընտրողը միշտ էլ սիրում է նորությունները: Այս իմաստով գուցե պայմանագրային զինծառայող Արտակ Գաբուզյանի ընտանիք այցելության նման նորությունները պետք են: Այսպես թե այնպես՝ քարոզարշավը դեռ կես չի ընկել, երեւի բոլոր թեկնածուների առումով էլ նորություններ դեռ կլինեն (դե Արամ Հարությունյանն ասել է՝ հանելու է թեկնածությունը):**

**Երկրից բացակայողների ցուցակը հրապարակելու մասին Հրանտ Բագրատյանի, Պարույր Հայրիկյանի, Րաֆֆի Հովհաննիսյանի՝ սկզբնապես Արման Մելիքյանի պահանջին միանալու հայտարարությունը գուցե եւ ճիշտ է, բայց ոչ ժամանակին, որովհետեւ ամեն ընտրությանը նախորդող հինգ տարվա մեջ կարելի է դա անել, ու ակնհայտ է, որ մի երկրում, որտեղ հազիվ երեք մլն մարդ է ապրում, չի կարող երկուսուկես մլն ընտրող լինել: Բայց նախագահական ընտրություններից քսան օր առաջ այդպիսի պահանջը նշանակում է մեկ բան՝ ոչ թե խնդրի լուծում, այլ ընդամենը քարոզարշավի ատրիբուտ: Ընհանուր առմամբ՝ Հայրիկյանն իր սովորական կերպարի մեջ է՝ խորքից ճանաչողները նրան միշտ էլ լավ են վերաբերվել, լավ չճանաչողները հոգնում են նրա նույն կարգախոսներից ու մտքերից: Բոլոր դեպքերում Հայրիկյանը Հայրիկյան է, անկախ նրա ունեցած միշտ ցածր տոկոսից:**

**Իրեն արբիտր կամ քաղաքական դատախազ հայտարարած Արամ Հարությունյանը չի խորշում սուր որակումներ ու մեղադրանքներ ուղղել ե՛ւ իշխանություններին, ե՛ւ այլ թեկնածուներին: Կարելի է ասել՝ ամենաընդդիմադիր կեցվածք ունեցող թեկնածուներից է: Սակայն նրա խոսքերը նշանակություն կունենային, եթե նրա հետեւում, ինչպես, ի դեպ, եւ Արման Մելիքյանի, Վարդան Սեդրակյանի, նույն Հայրիկյանի ու անգամ Բագրատյանի հետեւում կանգնած լինեին հզոր քաղաքական ուժեր: Սակայն դրանք չկան, ու անհայտ է՝ ո՞ւմ են ներկայացնում այդ մարդիկ: Միայն սեփական անձը կամ մի խումբ անձանց ներկայացնող մարդը չի կարող նախագահի պաշտոնի հավակնել: Թեեւ՝ Բագրատյանի դեպքում դեռ պարզ չէ՝ ՀԱԿ-ին հարող ուժերի ո՞ր մասն է պատրաստ նրան սատարել: Եթե շատերը՝ մեր խոսքը հետ կվերցնենք: Արամ Հարությունյանը ճիշտ է ասում՝ բնակչության կեսը, այո, թեկնածու չունի, քանի որ մի շարք քաղաքական ուժեր նախագահի թեկնածու չառաջադրեցին: Բայց դա չի նշանակում, որ ամեն ոք կարող է հավակնել լինելու այդ կեսի թեկնածուն:**

**Բացի դրանից՝ մարդկանց այլեւս ոչ ոք չի կարող զարմացնել զարմանազան խոստումներով. անցած քսան տարում նա տեսակ-տեսակ այնպիսի խոստումներ է լսել, էլ դու սուս, սակայն նրա կյանքը այդպես էլ չի բարելավվել: Այնպես որ պետք չէ նաեւ ամպագոռգոռ եւ անիրականանալի խոստումներ տալ, որոնք նկատվում են երբեմն համարյա բոլոր թեկնածուների շատախոսության մեջ:**

**Սակայն ընդհանուր առմամբ վերն ասվածը դեռ չի նշանակում, որ ընտրարշավը այն ակտիվությունն ունի, ինչ հարիր է որեւէ նախագահական ընտրությունների: Օրինակ՝ հեռուստաէկրաններին, անկախ նրանից, որ թեկնածուները մասնակցում են հարցազրույցների, տպավորություն է, թե թեկնածուների մենախոսություններ են հնչում, քանի որ թեկնածուների բանավեճերը միմյանց հետ բացակայում են: Մեզ հետ կարող են վիճել, թե կալիբրներն են տարբեր՝ մեկը՝ էպոսագետ, մեկը՝ գործող նախագահ եւ այլն: Սակայն ընտրողի համար այս բացատրությունները ընդունելի չեն, նա համեմատության մեջ կուզենար տեսնել թեկնածուների ընդունակությունների եւ կարողությունների տարբերությունը: Բանավեճերի բացակայությունը նկատել է նաեւ Երեւանի մամուլի ակումբը՝ երեկ իր հայտարարության մեջ այդ մասին նշելով:**

# Նիկոլայ Բորդյուժան պարգեւատրեց Արթուր Բաղդասարյանին

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը մասնակցել է ՀԱՊԿ ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի (ՌՏՀՄՀ) եւ ՌՏՀՄՀ-ին կից Գործարար խորհրդի հայկական եւ ռուսական ազգային մասերի համատեղ նիստին: Արթուր Բաղդասարյանը հանդես է եկել ելույթով, որում մասնավորապես կարեւորել է ծավալվող համագործակցության շրջանակներում հայ-ռուսական համատեղ ձեռնարկությունների ստեղծման հարցը, ինչը մեծ նշանակություն ունի Հայաստանի ռազմարդյունաբերական համալիրի հետագա զարգացման համար:

Քննարկումների արդյունքում ստորագրվել է ՀԱՊԿ ՌՏՀՄՀ եւ ՌՏՀՄՀ-ին կից Գործարար խորհրդի հայկական եւ ռուսական ազգային մասերի համատեղ նիստի արձանագրությունը, որում ամրագրվել են հայ-ռուսական համատեղ ձեռնարկությունների եւ սպասարկման կենտրոնների ստեղծմանն ուղղված կոնկրետ միջոցառումներ եւ քայլեր՝ ըստ ժամկետների եւ կատարողների:

Նիստի ավարտին Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժայի կողմից պարգեւատրվել է «Հավաքական անվտանգության պայմանագրի» մեդալով ՀԱՊԿ հավաքական անվտանգության համակարգի զարգացման եւ ամրապնդման գործում մեծ ավանդի, ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցության ամրապնդման, ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի որոշումների գործնական իրականացմանն ակտիվ մասնակցության համար:

# Միջազգային ներում կազմակերպությունը հետաքննության կոչ է անում Թուրքիային

Այդ մասին հունվարի 29-ի համարում տեղեկացրել է «BIA» լրատվական գործակալությունը: Ըստ տեղեկության՝ Միջազգային ներում կազմակերպությունը Սամաթիայում տարեց հայ կանանց նկատմամբ իրագործված հարձակումների առնչությամբ համակողմանի եւ անաչառ հետաքննություն սկսելու կոչ է արել Թուրքիայի ղեկավարներին:

Չնայած հետաքննության ծավալման մասին թուրքական ոստիկանության պնդումներին, այնուամենայնիվ կազմակերպությանը մտահոգություն են պատճառել հարձակումներում ռասիստական գործոնի հավանականությունն անտեսող պաշտոնական հայտարարությունները:

Միջազգային ներում կազմակերպությունը հաղորդագրության մեջ նշել է համակողմանի հետաքննության կարեւորությունը հետագա հարձակումների կանխարգելման առումով, զգուշացրել է, որ դրանից խուսափելը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի խախտում է, եւ ափսոսանքով արձանագրել է առ այսօր հետաքննության բացակայության փաստը:

Հ. Չ.

# Ինչո՞ւ է լռում Իլհամ Ալիեւը

*1-ին էջից*

«Մեկնաբանությունը» ստանդարտ է՝ «որոշ ապակառուցողական ուժեր հրահրել են անկարգություններ... իրավիճակը լիովին վերահսկվում է... մեղավորները կստանան արժանի պատիժ»: Հասարակության հետ երկխոսության մասին՝ ոչ մի ակնարկ: Ավելին, դատախազությունը ժամեր շարունակ հարցաքննել է քաղաքացիական շարժման ներկայացուցիչ Իլգար Մամեդովին՝ վերջինիս մեղադրելով, որ հունվարի «24-ին Բաքվից մեկնել է Իսմայիլի եւ զրույց ունեցել մարդկանց հետ»:

Դեպքերից անցել է շուրջ մեկ շաբաթ: Իլհամ Ալիեւը վերադարձել է Դավոսից: Նույնիսկ հասցրել է ցավակցական հեռագիր հղել Բրազիլիայի նախագահին՝ այդ երկրում տեղի ունեցած ողբերգության եւ մարդկային զոհերի առթիվ: Իսկ սեփական երկրում զանգվածային հուզումների, քաղաքացիական անհնազանդության, հուզումների եւ հրկիզումների մասին՝ ոչ մի խոսք:

Սա այն դեպքը չէ, երբ «լռությունը ոսկի է»: Լրագրող Քյամալ Ալին իրականությունը բնութագրել է այսպես. «Իսմայիլիցիներից խլված հողերում կառուցված առանձնատների բարձր պարիսպների թիկունքում հիմա չարացած վիճում են, միմյանց մեղադրում եւ քննարկում, թե մարդկանց ինչպես քշեն նախկին վիճակին, ընդմիշտ՝ չկորցնելով գողացածը: Բռնարարների մտքերը շաղվում են՝ մահակներից թռչելով ռետինե գնդակներին, բարձր տուգանքներից՝ բանտարգելության, գիշերային ծեծից՝ անգամ զուգարաններում տեսախցիկներ տեղադրելուն...»: (տես՝http://www.contact.az/docs/2013): Իր երկիրն է, ինքն ավելի լավ գիտի:

Արտառոցն այն է, որ Բաքվում ԱՄՆ պաշտոնաթող եւ այսօրվա դեսպանի գնահատականներին չի անդրադառնում ոչ միայն Իլհամ Ալիեւը, այլեւ՝ վարչակազմից սնուցվող՝ «քաղաքագետ-վերլուծաբանների» այն ջոկատը, որ միշտ զորաշարժի է ենթարկվում, երբ «հակաադրբեջանական ուժերը փորձում են խաթարել երկրի կայունությունը, վտանգել նրա միջազգային վարկը»: Ըստ երեւույթին, իշխող վարչախումբը Միացյալ Նահանգների դեմ լեզու թրջելու համարձակություն չունի. ԱՄՆ-ի, արեւմտյան դաշինքի երկրների հետ Ադրբեջանի «սերտ գործընկերային հարաբերությունների» մասին առասպելը վերջին «հնարավորությունն» է, որից կառչում է Իլհամ Ալիեւը: Եվ չի համարձակվում փորձության տանել ինքնզինքը: Որովհետեւ դրանից այն կողմ ուրվագծվում է ներքաղաքական ապոկալիպսիսը...

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Երեւանը զբոսաշրջային կենտրոն դառնալու ճանապարհին

Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության տուրիզմի բաժինը մեկ տարի է, ինչ գործում է: Բաժնի պետ **Մարիա Բարաղամյանի** ներկայացմամբ՝ մեկ տարվա ընթացքում հնարավոր չէ լուրջ արդյունքների հասնել, սակայն փորձել են առավելագույն ջանքեր կատարել Երեւանը զբոսաշրջային կենտրոն դարձնելու ուղղությամբ: Նախ միջազգային հարթակներում ներկայացվել է Երեւանը՝ նպատակ հետապնդելով առավել




լայն տեղեկատվություն հաղորդել մեր մայրաքաղաքի մասին: Ի տարբերություն այլ քաղաքների՝ Երեւանը դեռեւս չունի իր բրենդը: Մինչ այժմ ընդհանուր հայտարարի չեն եկել որոշելու մայրաքաղաքի զբոսաշրջային բրենդը: Հենց դա է պատճառը, որ Երեւանի քաղաքապետարանը երկարաձգել է բրենդի վերաբերյալ սահմանված մրցույթը: Թեպետ հայտարարված էր մինչեւ հունվար, սակայն մրցույթը կերկարաձգվի մինչեւ մարտի 15-ը: Մարիա Բարաղամյանն էլ կոչ է անում մարկետինգային ընկերություններին՝ լինել ակտիվ եւ աշխատանքներ ներկայացնել: Որոշակի հաջողություն գրանցած «Երեւան սիթի տուր» ավտոբուսային շրջիկ ծառայությունն այս տարվանից նոր երթուղիներին զուգահեռ կավելացնի ու կլավացնի ծառայությունների որակը: Մասնավորապես, զբոսավարի տեքստը կթարգմանվի 6-7 լեզուներով

Մայրաքաղաքը զբոսաշրջային կենտրոն դարձնելու ուղղությամբ քաղաքապետարանը բանակցություններ է վարում տարբեր գործընկեր քաղաքների հետ, նրանցից վերցնում փորձ, խորհուրդներ, նաեւ խոշոր տուրօպերատորների հետ կնքվել են պայմանագրեր: Բարաղամյանը հավաստիացնում է, որ Երեւանով հետաքրքրվածները շատ են: Այդ հետաքրքրվածությունը հատկապես նկատելի է Էրեբունի-Երեւան տոնակատարության ժամանակ, երբ մայրաքաղաք են այցելում մեծ թվով հյուրեր: «Որպեսզի Երեւանը դառնա հարմարավետ հյուրերի համար, նախ պետք է հարմարավետ լինի բնակիչների համար»: Սա քաղաքապետ Տարոն Մարգարյանի հորդորն է վարչության աշխատակիցներին: Այդ ուղղությամբ այժմ վարչության աշխատակիցները համագործակցում են ճանապարհային ոստիկանության հետ՝ փողոցներում վահանակներ տեղադրելու համար:

Համաձայն էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության հրապարակած տվյալների՝ նախորդ տարի Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը գերազանցել է 603.000-ը: Թե նրանց ո՞ր հատվածն է հատկապես մայրաքաղաքը տեսնելու ու այնտեղ իր հանգիստը կազմակերպելու համար այցելել Երեւան, հայտնի չէ, սակայն Բարաղամյանը հավաստիացնում է, որ գրեթե բոլոր այցելածները գոնե 2-3 օր մնում են Երեւանում, որովհետեւ բոլոր տուրօպերատորները ծրագիրն այնպես են կազմում, որ զբոսաշրջիկը գոնե 1-2 օր շրջի Երեւանով:

Հանրապետության հրապարակ, Կասկադ, Օպերա, Պատմության թանգարան, Կոնյակի գործարան, Մատենադարան, Էրեբունի արգելոց: Սրանք առավել հաճախ այցելվող վայրերն են: Մասնագետներն ուսումնասիրել են՝ կան ազգեր, որոնք մեկ անգամ Երեւան այցելելուց հետո սիրահարվում են եւ կրկին վերադառնում: Դա ոչ միայն մայրաքաղաքի ճարտարապետական կոթողների ու թանգարանների արդյունքն է, այլեւ ջերմ հյուրընկալության:

Թեպետ ամեն ջանք գործադրվում է Երեւանը զբոսաշրջային կենտրոն դարձնելու ուղղությամբ, սակայն Մարիա Բարաղամյանը նշում է նաեւ այն պրոբլեմները, որոնց պատճառով ցանկալին դժվարությամբ է իրականություն դառնում: «**Ազգի**» հարցին ի պատասխան՝ վարչության պետը նշում է, որ զբոսաշրջությանը խանգարող թիվ մեկ խնդիրը ավիատոմսերի գինն է, շատ թանկ է եւ հասանելի չէ շատերին: Հյուրանոցների թանկությունը նույնպես խոչընդոտում է զբոսաշրջության զարգացմանը: Մայրաքաղաքում զբոսաշրջային եռուզեռը մեկնարկում է մայիսին եւ շարունակվում մինչեւ նոյեմբեր: Ձմռանը Երեւանում հանգստանալ ցանկացող կամ Ամանոր նշող զբոսաշրջիկներ գրեթե չեք գտնի: Պատճառը ոչ միայն ամանորյա օրերին կրկնակի-եռակի թանկացող հյուրանոցներն են, այլեւ անբարենպաստ եղանակը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Ամերիաբանկը» բանկային համակարգի առաջին եռյակում է

## *Ֆինանսական տնօրենը ներկայացրեց բանկի տարեկան ցուցանիշները*



«Ամերիաբանկի» շահույթն անցած տարի կազմել է 6,2 մլրդ դրամ, նախորդ տարվա՝ 2011-ի համեմատ աճելով 50 տոկոսով: Այս մասին երեկ հայտնեց բանկի ֆինանսական տնօրեն Գեւորգ Թառումյանը՝ ներկայացնելով «Ամերիաբանկի» գործունեության տարեկան արդյունքները:

Ֆինանսական տնօրենը հայտնեց, որ «Ամերիաբանկը» բոլոր ցուցանիշներով ավելի մեծ աճ է ունեցել 2012-ին, քան Հայաստանի բանկային համակարգի միջին աճն է եղել: Բոլոր այդ ցուցանիշներով բանկը գտնվում է 1-3-րդ տեղերում: Մասնավորապես շահույթի մեծությամբ «Ամերիաբանկը» 2-րդ տեղում է:

Այլ ցուցանիշներին անդրադառնալով՝ **Գեւորգ Թառումյանը** տեղեկացրեց, որ հաճախորդներին ներգրավված միջոցներն անցյալ տարի ավելացել են 39 տոկոսով, ցպահանջ պարտավորությունները՝ 48 տոկոսով, ժամկետային ավանդները՝ 35 տոկոսով: Ժամկետային ավանդները նկատելի՝ մոտ 4,5 մլրդ դրամով աճեցին վերջին 2,5 ամսվա ընթացքում, բանկի հայտարարած ակցիայի արդյունքում: Ակտիվներն ավելացել են 22 տոկոսով, ինչը նույնպես բարձր է բանկային համակարգում գրանցված միջին աճի ցուցանիշից:

Վարկավորման առումով «Ամերիաբանկը» հիմնական շեշտը դրել է փոքր ու միջին ձեռնարկությունների եւ ֆիզիկական անձանց վրա: Բանկի վարկային պորտֆելն ընդհանուր առմամբ կազմում է 146 մլրդ դրամ: Ինչպես հայտնեց Գեւորգ Թառումյանը, փոքր ու միջին ձեռնարկությունների վարկավորումն ավելացել է 12 տոկոսով, ֆիզիկական անձանցը՝ 13 տոկոսով, իսկ վարկային պորտֆելն ընդհանուր առմամբ աճել է 7 տոկոսով: «**Ազգի**» հարցին պատասխանելով, թե որքա՞ն են փոքր ու միջին բիզնեսին բանկի վարկավորման տոկոսադրույքները, ֆինանսական տնօրենն ասաց, որ դոլարային վարկերը 13-14 տոկոս են, դրամայինը՝ 18 տոկոս, իսկ խոշոր բիզնեսին տրվող դոլարով վարկերը՝ 11-12 տոկոս:

Հիփոթեքային վարկավորումը նույնպես աճել է՝ 25 տոկոսով: Հիփոթեքային վարկերը հիմնականում շրջանառվում են անշարժ գույքի երկրորդային շուկայում եւ մարզերում: Մարզերում հիփոթեքային վարկավորման ավելացումը Գեւորգ Թառումյանը դրական համարեց: Գրեթե կրկնապատկվել է նաեւ լիզինգային պորտֆելը՝ կազմելով 3 մլրդ դրամ:

Անդրադառնալով Հայաստանի բանկային համակարգի ցուցանիշներին՝ «Ամերիաբանկի» ֆինանսական տնօրենը նշեց, որ միջին աճն այստեղ նախորդ 2 տարիներին կազմել է մոտ 20 տոկոս՝ ի տարբերություն 2009-2010 թվականների, երբ նվազում կար: Այս տարի, նրա կանխատեսմամբ, Հայաստանի բանկային համակարգի միջին աճը կգտնվի 18-22 տոկոսի միջակայքում: Այսինքն՝ աճի տեմպերը բանկային համակարգում կմնան նույնը: Ինչ վերաբերում է «Ամերիաբանկին», ապա բանկը ծրագրել է այս տարի եւս ունենալ ավելի մեծ աճ, քան բանկային համակարգի միջին աճն է:

Գեւորգ Թառումյանը հայտնեց նաեւ, որ այս տարի բանկի երկու մասնաճյուղ կբացվի Երեւանում՝ Սայաթ-Նովա փողոցում, իսկ մյուսի տեղը դեռ ճշտված չէ: Եվս երկու մասնաճյուղ կբացվի մարզերում: Ֆինանսական տնօրենը ավելացրեց, որ «Ամերիաբանկն» անցած տարի արժանացել է միջազգային մի քանի մրցանակների, մասնավորապես «Եվրո մանիի» կողմից մի քանի անվանակարգերով ճանաչվել է Հայաստանի լավագույն բանկ:

Ա. Մ.

# Վիրահայոց համայնքում շարունակվում են սիրիահայերի օգնության նպատակով բարեգործական միջոցառումները

Թբիլիսիում շարունակվում են հայ համայնքային կառույցների նախաձեռնությամբ «Օգնենք Հալեպ քաղաքի հայկական թաղամասերի բնակիչներին» շարքից կազմակերպվող բարեգործական միջոցառումները: Հունվարի 29-ին Վանո Սարաջիշվիլու անվան կոնսերվատորիայի փոքր դահլիճում կայացավ դասական երաժշտության համերգ, որին սիրով իրենց մասնակցությունն էին բերել տարբեր ազգության պատկանող երգ-երաժշտության վարպետ կատարողներ:

Համերգին ներկա էին Վրաստանում ՀՀ դեսպան պարոն Հովհաննես Մանուկյանը, վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, համայնքային կառույցների պաշտոնեության եւ հասարակայնության ներկայացուցիչներ:

Համերգը սկսվեց մարտական գործողությունների հետեւանքով ռմբակոծությունների ենթարկված Սիրիայի Հալեպ քաղաքի հայկական թաղամասի ներկա իրավիճակն արտացոլող կադրերի ցուցադրմամբ, որն ուղեկցվում էր կիթառի մելամաղձոտ նվագով:



Հանդիսատեսի բուռն ծափահարություններին արժանացան միջազգային մրցույթների հաղթող եւ «Գրան պրի» մրցանակի դափնեկիրներ Նաթիա Մդինարաձեի, Ռեգինա եւ Քրիստինե Մեհրաբովաների, Լիզի Ռամիշվիլիի, հանրապետական եւ միջազգային մրցույթների դափնեկիր Եսայի Աբովյանի, Թբիլիսիի օպերայի եւ բալետի թատրոնի դերասանուհի Իրինա Թաբորիձեի,Վրաստանի ֆիլհարմոնիայի մեներգչուհի Սվետլանա Տատոեւայի, Թբիլիսիի Վանո Սարաջիշվիլիի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր Էռնստ Առաքելովի, բազմաթիվ մրցույթների դափնեկիրներ Ինալ Ջիոեւի, Անրի Մեհրաբովի եւ այլոց վարպետ կատարումները:

Բարեգործական համերգին մասնակցության համար միջոցառումների կազմկոմիտեն շնորհակալագրեր հանձնեց համերգի բոլոր մասնակիցներին: Տոմսերի վաճառքից մուտք գործած գումարը կփոխանցվի «Սիրիահայերի օգնության հիմնադրամ»:

Վիրահայոց համայնքում շարունակվում է բարեգործական միջոցառումների շարքը:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

# «ԱրՔա» քարտեր ժամանակավորապես չեն տրամադրվի

Ինչպես տեղեկացանք Հայաստանի բանկերի միությունից, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային ընկերությունում ծրագրային ապահովման փոփոխությամբ պայմանավորված, հունվարի 29-ից մինչեւ փետրվարի 14-ը «ԱրՔա» համակարգի հետ աշխատող բանկերի կողմից նոր քարտեր չեն տրամադրվի, իսկ փետրվարի 8-ի լույս 9-ի գիշերը հնարավոր է համակարգի աշխատանքի ժամանակավոր ընդհատում: Գործող քարտերը՝ մինչ այդ եւ դրանից հետո, կշարունակեն սպասարկվել առանց խափանումների:

Ծրագրային փոփոխության եւ վերազինման անհրաժեշտությունը բխում է բանկերի հաճախորդների կողմից ձեւավորված նոր պահանջարկից, քարտերի ու գործարքների ավելացող ծավալներից, ինչպես նաեւ այս ոլորտում արձանագրվող տեխնիկական եւ տեխնոլոգիական համաշխարհային զարգացումներից: Նոր, միջազգային չափանիշներին համապատասխան ծրագիրը հնարավորություն կտա բարելավել քարտերի սպասարկման որակը եւ մատուցել նոր ծառայություններ:

Հայաստանի բանկերի միությունը ներողամտություն է հայցում հնարավոր անհարմարությունների համար:

Ա. Մ.

# Բարոյական եւ քաղաքական երկընտրանք

## *Չակ Հեյգելի ԱՄՆ ՊՆ նշանակման առթիվ*

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

Բարաք Օբամայի նախագահի վերընտրվելուց հետո սենատոր Չակ Հեյգելի պաշտպանության նախարար նշանակման լուրը քաղաքական փոթորիկ առաջացրեց միասեռականների, Վաշինգտոնի իսրայելական քարոզչական կազմակերպությունների եւ հայերի շրջանակներում: Շիտակ խոսքի տեր անձնավորություն լինելով՝ Հեյգելն իր քաղաքական կարիերայի ընթացքում քանիցս վիրավորել է վերոնշյալ եւ գուցե նաեւ այլ խմբավորումներին: Այժմ Զինված ուժերի կոմիտեի եւ հետագայում Սենատի ամբողջ կազմի առաջ իր նշանակման հաստատումը ձեռք բերելու համար նա պարտավոր է պատասխան տալ եւ բավարարել այդ խմբավորումների դժգոհությունները: Մյուս կողմից, պետքարտուղարության պաշտոնի նորանշանակ թեկնածու, սենատոր Ջոն Քերրին այդպիսի դժվարություններ հաղթահարելու կարիք չունեցավ: Բայց տեսնենք, թե ինչ մեղադրանքներ են ուղղված հանրապետական Հեյգելին: Միասեռականների հետ առնչված խնդիրն այն է, որ 1998-ին Հեյգելը բարեգործ, մարդասեր եւ հետագայում Լյուքսեմբուրգում Մ. Նահանգների դեսպան Ջեյմս Հորմելի հասցեին ասել էր, որ նա «բացահայտորեն ագրեսիվ միասեռական է» եւ որպես այդպիսին հարմար թեկնածու չէ այդ երկրում դեսպան լինելու:

Հրեական քարոզչական խմբավորումների (որոնց մեջքին կանգնած են նեոկոնները՝ նոր պահպանողականները) հետ տարակարծության հիմքում ընկած է Հեյգելի այն արտահայտությունը, թե «հրեական լոբբին Մ. Նահանգներում շատ մարդկանց է ահ պատճառում»: Այժմ իսրայելական քարոզչական խմբավորումների բոլոր քաղաքական զենքերն ուղղված են Հեյգելի դեմ: Նրան համարում են հակասեմական, Իսրայելի պետության հակառակորդ եւ նրա թշնամիների հանդեպ մեղմ քաղաքականություն վարող մի անձնավորություն: «Խաչակրաց արշավանք» է ծավալված նրա դեմ, Հեյգելը դժվարությամբ է կարողանում դեմ դնել այդ բոլորին: Հունվարի 7-ին «Լինկոլն Ջոռնըլ Սթարին» տված իր հարցազրույցում նա փորձել է ցույց տալ, որ անցյալի իր գործունեությունը «եղել է ամբողջական եւ աներկդիմի պաշտպանություն Իսրայելին»: «Ոչ մի ապացույց չկա, որ եղել եմ Իսրայելի դեմ կամ վնասել եմ Իսրայելին», ասել է նա:

Նման կատեգորիկ ժխտումը՝ հանուն իր կարիերայի, անշուշտ ավելի է հաստատում իր նախկինում կատարած հայտարարությունը, թե «հրեական լոբբին ահ է պատճառում շատերին»:

Նա նաեւ փորձեց լեզու գտնել միասեռականների հետ՝ պնդելով, որ այդ հարցում իր կարծիքը փոխվել է այժմ, եւ ինքը «անտարբեր» է: Այս խմբավորումները բավական ուժեղ են Ամերիկայում, որպեսզի անտեսվեն որեւէ մեկի կողմից, որն ուզում է քաղաքական ասպարեզում առաջ գնալ: Այդ թեկնածուն պարտավոր է հաշվի նստել այս ուժեղագույն խմբավորումների հետ:

Հայերի պարագայում, պետք է ասել, այս անգամ «բախտները բերել է»: Նրանք լավ կողմնակիցներ ունեն հանձինս մարդու իրավունքների պաշտպանների եւ հրեա մի շարք առաջնորդների:

Հայերի հասցեին ուղղված խոսքերը նողկալիորեն սխալ են: 2005-ին Հայաստան կատարած այցելության ժամանակ նա ասել էր. «1915-ին պատահածը տեղի է ունեցել 1915-ին: Որպես սենատոր կարծում եմ՝ լավագույն միջոցը այդ հարցը պատմաբաններին թողնելն է, որպեսզի նրանք որոշեն, թե ի՞նչ պատահեց եւ ինչո՞ւ պատահեց»:

Սա ցեղասպանությունը ժխտելու լավագույն բաղադրատոմսն է, որ Անկարայում է հորինվել եւ տաք-տաք մատուցվել Հեյգելին: Նախկին սենատորը իր անտարբերությունն այդ հարցում ցուցաբերեց նաեւ ցեղասպանության ընդունման բանաձեւին դեմ քվեարկելով: Այժմ հայերին է պաշտպանում մի ուժեղագույն կազմակերպության ներկայացուցիչը՝ Ուոլտեր Ռայկը, Մ. Նահանգներում Հոլոքոսթի հիշատակության թանգարանի նախկին տնօրենը, որն «ամոթալի» է որակել Հեյգելի 2005 թվի խոսքերը: «Նրա թեկնածության հաստատմանը նվիրված լսումների ժամանակ սենատորները նրան պետք է հիշեցնեն այդ խոսքերը եւ պատասխան պահանջեն նրանից: «Հանուն խաղաղության գործընթացի նման խոսքեր ասելն ուղղակի խայտառակություն է եւ անարգանք է զոհերի հիշատակին: Կարելի՞ է իսկական խաղաղություն հաստատել մոռանալով, թաքցնելով կամ սխալ բնութագրելով այն, ինչ կատարվել է իրականում», ասել է Ռայկը:

Շատ լավ է ասված: Եվ ուրախալի է, որ հրեա առաջնորդներն սկսել են պաշտպանել մեր դատը, անշուշտ՝ հետապնդելով նաեւ իրենց շահը: Քաղաքականության բնույթն է այդպիսին, եւ մենք միայն շնորհակալ պետք է լինենք նրանց:

Ճշմարտության պահը հասունացած համարելով՝ Հեյգելը ներողություն է խնդրել ինչպես միասեռականներից, այնպես էլ հրեաներից: Բայց դեռեւս ոչ՝ հայերից: Պատճառը դժվար չէ կռահել: Այդ քարոզչական խմբավորումները բավական ուժեղ են, եւ ամեն մի քաղաքական գործիչ պետք է հաշվի նստի նրանց հետ: Իսկ ի՞նչ կշիռ ունեն հայերն Ամերիկայում եւ կովկասյան տարածաշրջանում: Հեյգելի վերաբերմունքը այդ հարցերի պատասխաններից է կախված:

Հայկական քարոզչական խմբավորումները հաշտ չեն միմյանց հետ: Մ. Նահանգներում Հայկական ցեղասպանության թանգարանի շուրջը ծավալված սկանդալը դրա վառ վկայությունն է: Բացի դրանից՝ ընտրությունների ժամանակ հայերը բոլորովին ուշադրություն չեն դարձնում կամ քիչ են դարձնում երկրի ներքին կամ Հայաստանի հետ կապված խնդիրներին:

Օբաման վերընտրվեց նախագահի պաշտոնում լատինոների, սեւամորթների, միասեռականների եւ ներգաղթողների համախմբված կոալիցիայի շնորհիվ, մինչ ռեստորանային մոլեռանդ նեոկոնները կարծում էին, թե իրենք են երկրի տերերը:

Իսկ որտե՞ղ էին հայերը ընտրության թեժ պայքարում: Մի մասը տառապում էր «մի եզակի հարցի համախտանիշով», մյուս մասը տարակարծիք էր քաղաքական հոսանքների, Հայաստանի եւ ցեղասպանության ճանաչման հետ կապված հարցերում: Մի երրորդ մասն էլ բոլորովին անտարբեր էր ամեն տեսակի հարցի վերաբերյալ: Նման կացությունից միայն մի դաս կարելի է քաղել: Մինչեւ չհամախմբվենք եւ մեկ ձայն չդառնանք քաղաքական գործունեության ասպարեզում, ո՛չ Հեյգելին, ո՛չ էլ մեկ ուրիշ քաղաքական գործչի կարող ենք պարտադրել որեւէ դրական քայլ կատարել:

Մեդալի մյուս կողմում Թուրքիայի մեծացող քաղաքական դերակատարությունն է համաշխարհային թատերաբեմում եւ Ադրբեջանի վտանգավոր ռազմականացումը, մինչ Հայաստանից արտագաղթը չի դադարում, եւ սփյուռքյան բազկաթոռներում նստած քաղաքագետներ քննադատելուց բացի ոչ մի բան չեն ձեռնարկում:

Սակայն մի լավ կետ կա Հեյգելի նշանակման մեջ, որը չի կարելի առանձնացնել քաղաքական մյուս, ավելի լայն զարգացումներից: Դա հետեւյալն է. երբ Ջորջ Բուշն առաջին անգամ նախագահ ընտրվեց, խոստացավ, որ Ամերիկան կդառնա «ավելի ազնիվ ու բարի»: Բայց մենք բոլորս ականատես եղանք ամբողջ աշխարհով մեկ ծավալված պատերազմների եւ արյունահեղության հատկապես նրան հաջորդած կրտսեր Բուշի ժամանակաշրջանում, երբ վերջինս պատանդ դարձավ «նեոկոնների» կլիկի խարդավանքներին եւ ընկավ այն թակարդը, որի մասին ժամանակին զգուշացրել էր նախագահ Էյզենհաուերը՝ երկրի զավթումը ռազմարդյունաբերության համակարգի ներկայացուցիչների կողմից, որի հետեւանքով տնտեսությունը խորտակվեց, անապահովությունն ու անկայունությունը դարձան գերիշխող աշխարհում եւ հոռետեսությունը համակեց բոլորին:

Բարաք Օբաման ընտրվեց նախագահ այն խոստումով, որ կբարելավի տնտեսությունը, առողջապահության համակարգը եւ կսահմանափակի անիմաստ պատերազմները: Նրա հակառակորդ Միթ Ռոմնին խոստանում էր 15 միլիարդ դոլար ավելի հատկացնել բանակին, որը չգիտեր ինչ անել այդ գումարը: Դա, իհարկե, համահունչ էր «նեոկոնների» քաղաքականությանը: Չակ Հեյգելի, որպես հանրապետականի, ընտրությունը նախ նպատակ ուներ շեղելու ուշադրությունը եւ քննադատությունից ապահովվելու վարչակարգին, երբ վերջինս ստանձնի ռազմական ուժերի սահմանափակման պարտականությունը: Իր երդմնառության խոսքում Օբաման ասաց. «Մենք որպես ժողովուրդ դեռեւս հավատում ենք, որ տեւական անվտանգությունն ու խաղաղությունը կարելի է ձեռք բերել առանց մշտական պատերազմների: ...Մենք նաեւ ժառանգներն ենք նրանց, ովքեր խաղաղություն են վաստակել, ոչ թե պատերազմն ու հավերժական թշնամիներին դարձրել են վստահելի գործընկերներ»:

Այս խոսքերը ռազմավարական հսկայական փոփոխություն են բերում Սպիտակ տան քաղաքականության մեջ, եւ Հեյգելն իր առանձնահատուկ տեղն ունի այնտեղ: Ինչպես «Նյու Յորք թայմսի» հունվարի 20-ի համարում գրում էր Բիլ Քելլերը՝ «Օբամայի արտաքին եւ պաշտպանության քաղաքականությունները ուղղորդվում են Սպիտակ տանից: Նախագահի Օբաման կարծես համաձայն է Մոշե Դայանի այն հայտարարությանը, որ «եթե խաղաղություն ես ցանկանում, պետք է խոսես ոչ թե բարեկամներիդ, այլ թշնամիներիդ հետ»:

Եթե խաղաղության այս քաղաքականությունը գործի դրվի, մենք անկասկած լարվածության թուլացում կնկատենք Ռուսաստանի հետ սառը պատերազմում եւ Թուրքիայի տարածքում հրթիռներ տեղադրելու մտադրության մեջ: Մենք նաեւ կարող ենք ակնկալել Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունների բարելավում, փոխանակ սպառնալիքների, որոնք կարող են աղետալի հետեւանքներ ունենալ Հայաստանի համար:

Վաշինգտոնը ներկայումս չեզոք դիրք է բռնել առափնյա կղզիների շուրջը Ճապոնիայի եւ Չինաստանի միջեւ ընթացող տարակարծությունների վերաբերյալ: Քանի որ Հեյգելը վերահսկելի է եւ նախագահի քաղաքականությունն է գործ դնելու, մենք կարող ենք թունելի վերջում լույսի նշույլ տեսնել: Պաշտպանության նախարարը չի կարող ինքնուրույն գործել: Նա պետք է ենթարկվի նախագահին:

Ճիշտ է, Օբաման դեռեւս տատանվում է «ցեղասպանություն» բառն օգտագործել, սակայն առայժմ նրա օգտագործած բառերն ու տեսակետները առավել մոտիկ են պատմական ճշմարտությանը, քան Մ. Նահանգների որեւէ այլ նախագահի, բացառությամբ Ռոնալդ Ռեյգանի: Նրա առաջադրած թեկնածությունը դեռեւս մնում է բարոյական ու քաղաքական երկընտրանք մինչեւ չարդարանան մեր ակնկալիքները:

**Դետրոյթ, ԱՄՆ**

**Թարգմ. Հ. Ծ.**

# Պաշտոնական հափշտակության եւ ամոթանքի ցուցակագրումը

Անժամանակ մահվան ափսոսանք եւ հուզմունք կա «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի դեկտեմբերի 22-ի համարի, թուրքական «Թուդեյզ Զամանից» արտատպված, վերոնշյալ վերնագրով **Դավուդ Բայդարի** հոդվածում, որտեղ հեղինակը խոսում է հանդարտ բնավորության տեր հայազգի իրավաբան եւ մարդու իրավունքների պաշտպան Տիրան Բաքարի մասին, որ 60 տարեկանում կնքել է իր մահկանացուն Թուրքիայում:

«Նրա մահը մեծ կորուստ է բոլորիս համար: Ես միշտ հիշելու եմ նրա հետ իմ անձնական զրույցները 1990-ականների կեսերին, որոնք ճանապարհ հարթեցին «Ակօս» թերթի հրատարակմանը,- գրում է Բայդարը եւ ավելացնում,- երբ ես թերթում էի «Ստամբուլում հայկական կալվածքների բռնագրավման պատմությունը» մեծածավալ աշխատությունը, գիտակցում էի, թե ինչքան հպարտ պետք է զգար նա, որովհետեւ դա ոչ միայն կալվածքների եւ քարե շինությունների, այլեւ միս ու արյունից պատրաստված մարդկային էակների մասին է, որոնք, հարուստ թե աղքատ, տարեց թե երիտասարդ, քրտնաջան աշխատել էին ձեռք բերելու համար այդ ամենը: Այդ՝ անօրինական ձեւով հափշտակված շինությունները դարձել էին համայնքի դպրոցները, եկեղեցիներն ու որբանոցները՝ ապահովելով սոցիալ-մշակութային կյանքը ամբողջ թուրքահայության: Մեր ցանկությունն է, որ հետագայում նման անարդարություններ չկրկնվեն:

Գրքի 500 էջերում փաստացի տվյալներով ներկայացված է վերաբերմունքը հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության եւ հետագայում հանրապետության ժամանակաշրջանում: Պատմությունը երեք մասից է բաղկացած, առաջինում ոչ միայն փոքրամասնությունների հաստատություններն են ներկայացված, այլեւ պատմական շրջանակների քաղաքականության փոփոխությունները եւ Լոզանի պայմանագրի ազդեցությունը: Երկրորդում առգրավման պատմություններն են՝ սկսած պատմական Գալֆայան որբանոցից մինչեւ Բոմոնտի Մխիթարյանի տարրական դպրոցի եւ Անտոնյան վանքի եւ դպրոցի հափշտակումները:

Փաստերը հետեւում են մեկը մյուսին, եւ շնորհիվ վերափոխված քաղաքականության այսօր մենք հասու ենք լինում նման բացահայտումների:

Բայց փաստի տխուր կողմն այն է, որ տասնամյակներ առաջ կատարվածը հնարավոր չէ դարմանել: Դա ամոթանք է եւ... մշակութային ոճրագործություն: Գրքի երրորդ մասում ներկայացված են 53 հիմնարկությունների կալվածքները, թաղամաս առ թաղամաս, լուսանկարներով եւ քարտեզներով համալրված: Անարդարությունների սկզբնաղբյուրը 1936 թվին ստորագրված չարագուշակ «Հայտարարությունն» էր, որով կառավարությունը իրականացրեց բռնագրավումները: Նացիստական դարաշրջանը նույնպես նպաստեց դրանց: «Տարիներ շարունակ գործ ունեցել եմ այդ «հայտարարության» հետ, եւ ամենափոքր առաջընթացն անգամ ինձ համար ողջունելի է», ասել էր ինձ Բաքարը: Հուսանք, որ նրա լավատեսությունը իրականություն դառնա եւ անարդարությունը՝ վերահաստատվի»: Այս խոսքերով է ավարտում իր հոդվածը Դավուդ Բայդարը:

**Հ. Ծ.**

# Նախընտրական կոմիքս



# Մշակույթ

## Ֆիլհարմոնիկի համերգները լի են լինելու հետաքրքրական հյուրախաղերով

Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը տարին սկսում է հետաքրքրական համերգներով, որոնցից առաջինը տեղի կունենա վաղը՝ փետրվարի 1-ին: Արամ Խաչատրյան համերգասրահում փետրվարի 1-ին Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը, կկատարի Դմիտրի Շոստակովիչի թիվ 10 սիմֆոնիան, իսկ գերմանացի դաշնակահար Բերնդ Գլեմզերի հետ՝ Ռախմանինովի Դաշնամուրի թիվ 3 կոնցերտը:

Երեկ լրագրողների հետ հանդիպմանը ՀՊՖՆ-ի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր **Էդուարդ Թոփչյանն** իր ուրախությունը հայտնեց գերմանացի հայտնի դաշնակահար Բերնդ Գլեմզերի հետ համատեղ համերգի կապակցությամբ: Նշենք, որ դաշնակահարը առաջին անգամ չէ, որ գտնվում է Հայաստանում եւ համերգային ծրագրով հանդես գալիս ֆիլհարմոնիկի հետ: Է. Թոփչյանը նշեց. «Ռախմանինովի Դաշնամուրի թիվ 3 կոնցերտը Գլեմզերը հիանալի է նվագում: Միաժամանակ, քանի որ մենք ունենք երկրորդ լեգիոներ երաժիշտ՝ ֆլեյտահարուհի Սառա Կարմեն Ուռենյա Կաբրերան, ապա որոշեցինք Շոստակովիչի թիվ 10 սիմֆոնիան նվագել: Սառա Կարմեն Ուռենյա Կաբրերան հիանալի ֆլեյտահարուհի է, սակայն մենք իրեն հրավիրել ենք որպես պիկոլիս եւ ինչպես գիտեք Շոստակովիչի թիվ 10 սիմֆոնիան էլ հայտնի է որպես պիկոլոյի մեծ սոլոներով սիմֆոնիա»:

«Տարեցտարի ֆիլհարմոնիկի երաժիշտները էլ ավելի լավ են նվագում եւ ավելի պրոֆեսիոնալ են դառնում՝ դիրիժորի ջանքերի շնորհիվ, որը անթերի է կատարում իր աշխատանքը»,- իր հերթին ասաց դաշնակահարը եւ ավելացրեց. «Մեծ հաճույք եւ բավականություն եմ զգում ամեն անգամ Հայաստան ժամանելիս, երբ առիթ է լինում նորից ու նորից համագործակցելու իմ ընկեր երաժիշտների հետ»: Դաշնակահարը ցավով փաստեց, որ Գերմանիայում երիտասարդները դասական համերգների շատ քիչ են գնում, այն դեպքում, երբ Գերմանիան ունի դասական երաժշտության խոր ավանդույթներ: Իսկ Է. Թոփչյանը ավելացրեց, որ այնտեղ համերգների տոմսերը բավականին թանկ են եւ ուսանողները իվիճակի չեն այդքան գումար վճարելու:

Նշենք, որ ողջ համերգաշրջանի ծրագիրը բավական հագեցած է. նախատեսվում են Բրուկների թիվ 3, 4, 7, 8, 9 սիմֆոնիաների կատարումներ, եւ փետրվարին կհնչի նրա 4-րդ սիմֆոնիան: Բացի այդ, այս տարին հիշարժան կդառնա մեծանուն կոմպոզիտորներ Վերդիի եւ Վագների 200 հոբելյաններով: ՀՊՖՆ-ը կնշի նաեւ նշանավոր լեհ կոմպոզիտորներ Լյուտոսլավսկիի 100-րդ եւ Պենդերեցկիի 80-րդ հոբելյանները: Բացի այդ, ՀՊՖՆ-ն կկատարի Մասկանիի «Գեղջկական ասպետություն» օպերան, Պուչինիի «Տոսկա» օպերան Սուքիաս Թորոսյանի բեմադրությամբ: ՀՊՖՆ-ի մյուս ցանկությունն է կազմակերպել Սերժ Թանկյանի «Օրկա» սիմֆոնիայի հայաստանյան պրեմիերան:

Deem Communications-ի հետ համատեղ ֆիլհարմոնիկը կկազմակերպի նաեւ սիմֆոնիկ ռոք համերգ, որի ընթացքում կհնչեն 15 լավագույն ռոքային հիթեր մշակված ՀՊՖՆ-ի համար Ա.Իրադյանի կողմից:

Իսկ սեպտեմբերին սպասվող Երեւանյան 7-րդ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում երաժշտասերները հնարավորություն կունենան ներկա գտնվելու Իզաբել Ֆաուստի, Ալեքսանդր Մելնիկովի, Կիրիլ Գերշտեյնի, Մարիո Բրունելլոյի, Անդրեյ Բառանովի, Մասան Պորատի, Կոլյա Բլախերի, Սթիվեն Իսերլիսի եւ շատ ուրիշների համերգներին:

Վերադառնալով փետրվարյան համերգներին, նշենք որ փետրվարի 8-ին հայ լավագույն կիթառահար Հակոբ Ջաղացպանյանը կկատարի Ռոդրիգոյի շատ սիրված «Aranjuez» կոնցերտը եւ Ռիմսկի-Կորսակովի «Իսպանական կապրիչիոն», իսկ համերգի երկրորդ բաժնում կներկայացնենք Բրամսի 4-րդ սիմֆոնիան:



Փետրվարի 15-ին հանդիսատեսը հնարավորություն կունենա լսելու Բրուկների թիվ 4 սիմֆոնիան, իսկ Հայկ Դավթյանը կկատարի Սիբելիուսի Ջութակի շատ սիրված կոնցերտը:

Փետրվարի 22-ին հույն դիրիժոր Նիկոս Քրիստոդուլուի ղեկավարությամբ կհնչեն Վեբերի «Էվրիանտե» նախերգանքը, Դեբյուսիի Պրելյուդները - Գիրք Երկրորդ՝ գործիքավորումը դիրիժորի կողմից, եւ Մոցարտի Դաշնամուրի թիվ 21 շատ սիրված կոնցերտը կորեացի դաշնակահար Յուն Սու Ռեեի մենակատարությամբ:

ՀՊՖՆ-ի տնօրեն **Ռուզան Սիրունյանը** տեղեկացրեց նաեւ, որ իրենք Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգներին հրավիրում էին երեւանյան մի շարք կրթօջախների ուսանողներին եւ աշակերտներին, իսկ այժմ հենց այդ ԲՈՒՀ-երը համագործակցում են իրենց հետ՝ գնելով ՀՊՖՆ համերգների տոմսերը՝ իրենց ուսանողների համար:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Հրատարակվել է «Գեղարմ» հանդեսի 50-րդ համարը

Վերջերս լույս տեսավ «Ոգի-Նաիրի» գեղարվեստի կենտրոնի (Ստեփանակերտ) հովանու տակ հրատարակվող «Գեղարմ» գրական-թարգմանական հանդեսի հոբելյանական՝ 50-րդ համարը: Միաժամանակ լրացել է հանդեսի հրատարակության 10 տարին, ինչը կրկնակի ուշագրավ իրադարձություն է ոչ միայն Արցախի, այլեւ հայկական ընդհանուր գրական-մշակութային դաշտում: Պարբերականը նախընթաց տարիներին իր ուրույն տեղն է գրավել արդի գեղարվեստական խոսքի հրատարակման ասպարեզում՝ կանոնավորապես ընթերցողին մատուցելով հայ եւ օտար հեղինակների լավագույն ստեղծագործություններից:




«Գեղարմ»-ի հոբելյանական համարում տեղ են գտել Հրանտ Ալեքսանյանի, Վարդան Հակոբյանի բանաստեղծական նոր շարքերը, էջեր չինական եւ բոսնիական ժամանակակից պոեզիայից, Օսիպ Մանդելշտամի, Իգոր Սեւերյանինի (Ռուսաստան) առանձին ստեղծագործությունները թարգմանաբար, Յուրի Լոտմանի «Մշակույթի ֆենոմենը» հոդվածը, հարցազրույց բանաստեղծ Հենրիկ Էդոյանի հետ, գրական-հրատարակչական խճանկար եւ այլ նյութեր:

Հանդեսն ունի նաեւ անգլերեն եւ ռուսերեն թարգմանական բաժիններ: Սույն համարում հրապարակվել են Թադեւոս Տոնոյանի, Զավեն Բեկյանի, Ռոբերտ Եսայանի, Արտաշես Արամի եւ Արփի Ոսկանյանի բանաստեղծությունների անգլերեն թարգմանությունները: Ռուսերեն բաժնում հանդեսն անդրադարձել է Կոստան Զարյանի հուշագրությանը:

«Գեղարմ»-ի հիմնադիր-խմբագիրն է բանաստեղծ, թարգմանիչ Հրանտ Ալեքսանյանը:

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ





## «Հայաստանը հունական երգիծական մամուլում»

### *Ցուցահանդեսի բացում Հունաստանի ազգային գրադարանում*

**Համիդյան ջարդերի ժամանակաշրջանից մինչեւ Հայոց մեծ եղեռնի տարիները եւ գերտերությունների քաղաքական առքուվաճառքը Օսմանյան կայսրությունում ապրող ոչ թուրք ազգերի՝ մանավանդ հայերի եւ հույների հաշվին, մինչեւ 1920-ական թվականները մեծ արձագանք են ունեցել ժամանակի հունական մամուլում, սակայն այս մասին շատ քիչ է հայտնի ժամանակակից հայ եւ հույն հանրությանը, որ հույն մամուլը, մանավանդ երգիծանկարչությունն ու ծաղրանկարչությունը, այս առումով ինչ գործունեություն են ունեցել:**

**Հունահայկական ուսումնասիրությունների կենտրոնը, Հունաստանում ՀՀ դեսպանության հովանավորությամբ, 2013թ. նախատեսել է «Հաց ու գիր» ընդհանուր խորագիրը կրող մշակութային միջոցառումների շարքի անցկացումը:**

**Տարվա ընթացքում անց են կացվելու հայ-հունական բարեկամության մասին պատմող ցուցահանդեսներ, դասախոսություններ, թատերական բեմադրություններ:**

**Հունա-հայկական ուսումնասիրությունների կենտրոնի աշխատանքի շնորհիվ, երկուշաբթի, հունվարի 21-ի երեկոյան, Հունաստանի Ազգային գրադարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ դասախոսություն եւ ցուցահանդեսի բացում, նշված շարքի անդրանիկ միջոցառումը՝ «Ժպիտ եւ արցունք. Հայաստանը հունական երգիծական մամուլում» խորագրով ցուցահանդես:**

**Ձեռնարկը կազմակերպել էին Հունաստանում Հայաստանի դեսպանությունը, Հունաստանի Ազգային գրադարանը եւ Հունա-հայկական ուսումնասիրությունների կենտրոնը:**

**Ցուցահանդեսը բովանդակում է ավելի քան 100 պաստերներ, երգիծանկարչական եւ փաստավավերագրական նյութեր:**

**Օրվա բանախոսներից՝ հույն հայտնի գրող Պետրոս Մարգարիսը խոսեց «Ի՞նչ է երգիծագրությունը» ընդհանուր թեմայով: Նա հիմնականում բացատրեց երգիծագրության դերը պատմական իրողությունների արտահայտման եւ նրա ազդեցությունը հասարակության մտքի զարգացման վրա:**

**«Հունական երգիծագրական ու երգիծանկարչական մամուլի պատմությունը եւ նրա քաղաքական ու հասարակական դերակատարությունը 19-րդ դարի եւ 20-րդ դարի սկիզբին» թեման շոշափեց հույն պատմաբան տիկին Էլի Դրուլիան: Նա խոսելով 19-20-րդ դարերի Օսմանյան կայսրությունում տիրող քաղաքական ու հասարակական իրավիճակի մասին, գծագրությունների ցուցադրությամբ, բացատրեց այդ զարգացումների մասին հունական երգիծանկարչության եւ երգիծաբանության արձագանքի մասին:**

**Այնուհետեւ Հունա-հայկական ուսումնասիրությունների կենտրոնի քարտուղար պարոն Հովսեփ Քասեսյանը բացատրեց փաստավավերագրական նյութերի եւ ծաղրանկարների դերակատարությունը Հայոց ցեղասպանությունը այլ ազգերին ծանոթացնելու եւ հատկապես գիտական շրջանակներին որպես աղբյուր ծառայեցնելու դերի մասին:**

**Միջոցառմանը ներկա էին հայկական տարբեր հասարակական եւ մշակութային կազմակերպությունների եւ մամուլի ներկայացուցիչներ, ՀՀ դեսպանության խորհրդական պարոն Մինաս Մարտիկյանը եւ թեմայով հետաքրքրվող հայ եւ հույն ուսանողներ, գիտաշխատողներ եւ հանդիսատեսներ:**

*«Հայաստան» լրատու ցանց*

## «Փթիթի» հերթականը

**Ուրախությամբ ստացանք Բեյրութի «Փթիթ» մանկապատանեկան պարբերաթերթի հերթական՝ 7-րդ համարը, որն ուսուցողական-դաստիարակչական ուղղվածությամբ գտնված է թե՛ ծնողների, թե՛ երեխաների համար: Ամեն անգամ հանդեսի գունագեղ գրավչությանը նոր, թարմ կերպարանք է հաղորդվում, բովանդակային բազմազանությամբ ստեղծելով ընթերցողական հետաքրքրություն եւ կապվածություն: Հատկապես խաղ-վարժությունները, որ բացի գիտելիք ու տեղեկություն հաղորդելուց, ճկուն են դարձնում մտածողությունը՝ ինչպես թվային լաբիրինթոսները, պահված բառի, տառի գլուխկոտրուկները: Անպայման ուսանելի են զետեղված ընթերցողական նյութերը:**



**Նախորդ համարի «Առողջապահական» բաժնում երեխային տեղեկացվում էր համակարգչի՝ չափից ավելի կիրառելու դեպքում բացասական հետեւանքների մասին: Այս համարում թեման շարունակելով, անդրադարձ է արվում համակարգչի ունեցած հոգեբանական եւ ընկերային բացասական ազդեցությունների մասին՝ ինչպես անձի մեկուսացմանը նպաստելը, խաղերի չարաշահումով ընտանիքից, ընկերներից օտարանալը, ավելորդ քաշը եւ այլն: Հորդորվում է հատկապես հեռու մնալ վտանգավոր խաղերից, չդառնալ սարքի գերին: Ինչոր տեղ խրախուսելով կայքերի ընթերցանությունը, այնուամենայնիվ, համակարգչի յուրաքանչյուր մեկ ժամվա դիմաց խորհուրդ է տրվում 10-15 րոպե գիրք, թերթ, տպագիր գրականություն կարդալ:**

**Հայ գրքի տարին կամ գրատպության 500-ամյա հոբելյանը առիթ դարձնելով՝ ամանորյա նվերի նոր տեսակ է առաջարկվում ծնողներին եւ ուսուցիչներին. երեխաներից օրվա մեջ նվազագույնը կես ժամ հայերեն կարդալու խոստման տեսքով:**

**Մարդասիրական զգացումներ արթնացնելու եւ զարգացնելու դաստիարակչական այն անկաս, նուրբ ձեւերը, որ կիրառում են պարբերաթերթի խմբագիրները՝ Վերժին եւ Կարո Աբրահամյանները իսկապես արժեքավոր են՝ ոչ միայն ընտրված տեքստերում, խմբագրականներում, անգամ բարեմաղթանքներում (Ամանորյա եւ այլ) մանուկ հոգիներում ցանելով գթասրտության, կարեկցանքի, բարության՝ մեր օրերում այնքան անհրաժեշտ սերմեր-զգացումներ:**

**Եվ իզուր չէ, որ անցյալ տարի պարբերաթերթը արժանացավ ՀՀ սփյուռքի նախարարության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի երկամյա մրցանակին՝ «Մանկապատանեկան մամուլ» անվանակարգում:**

Մ. Բ.

# Հայ ըմբիշների հարուստ ավարը

Հայաստանի հունահռոմեական ըմբշամարտի հավաքականը մեծ հաջողության հասավ Դանիայում անցկացված A կարգի մրցաշարում՝ թիմային հաշվարկով գրավելով 1-ին տեղը: Հավաքականի կազմում մրցագորգ դուրս եկած հայ 8 ըմբիշներից 7-ը դարձան մրցանակակիրներ՝ նվաճելով 3 ոսկե, 2-ական արծաթե եւ բրոնզե մեդալ:



Հայաստանը քաշային 7 կարգերից 3-ում էր ներկայացված: Մինչեւ 66 կգ քաշային կարգում հանդես եկան 4 հայ ըմբիշներ: Մեր տղաները գերազանց ելույթներ ունեցան՝ նվաճելով խաղարկվող բոլոր մեդալները:

Պատվո պատվանդանի վերին աստիճանին կանգնեց Սասուն Ղամբարյանը: Նա անցկացրած 5 գոտեմարտերից շահեց 4-ը, կրեց մեկ պարտություն նորվեգացի Մարիուս Թոմսենից: Սասունը հաղթանակներ տոնեց դանիացի Ֆրեդերիկ Բերեհուսի, ֆինն Սասու Կասինենի, իր թիմակիցներ Խուրով Մելիքյանի եւ Տիգրան Թորոսյանի նկատմամբ: Վերջինիս հետ գոտեմարտը կայացավ մրցաշարի եզրափակիչում: Սասունը մրցակցին հաղթեց 6-1 հաշվով:

Արծաթե մեդալի արժանացած Տիգրան Թորոսյանը մինչեւ եզրափակիչ հասնելը հաղթել էր ավստրիացի Բենեդիկտ Պուֆերին, շվեդ Պոնտուս Բերգստրյոմին, նորվեգացի Պետեր Կարհսոնին եւ իր թիմակից Արամ Ջուլֆալակյանին: Վերջինս դարձավ բրոնզե մրցանակակիր: Նա հաղթել էր Պոնտուս Բերգստրյոմին, դանիացի Անդերս Էքստրյոմին, ավստրիացի Բենեդիկտ Պուֆերին եւ ֆինն Սասու Կասինենին: Քաշային այս կարգում Հայաստանի 4-րդ ներկայացուցիչը՝ Խուրով Մելիքյանը զբաղեցրեց 5-րդ տեղը:

Մինչեւ 84 կգ քաշայինների մրցավեճում գերազանց հանդես եկավ Արթուր Շահինյանը՝ 2-րդ ոսկե մեդալը պարգեւելով Հայաստանի հավաքականին: Եզրափակիչի ճանապարհին Արթուրը հաջորդաբար պարտության մատնեց նորվեգացի Նիլս Էսբենսենին, չեխ Թոբիաս Կվարնմարկին, Գերմանիան ներկայացնող Ռամսին Ազիզսիրին ու Շվեդիայի ներկայացուցիչ Վիկտոր Կառլսոնին: Վճռորոշ գոտեմարտում հայ ըմբիշը 2-1 հաշվով պարտության մատնեց դանիացի Ջիմ Պետերսոնին եւ դարձավ մրցաշարի հաղթող:

Քաշային այս կարգում հանդես եկած Մաքսիմ Մանուկյանն արժանացավ բրոնզե մեդալի: Նա հաղթեց գերմանացիներ Նիկո Բրուներին, Բաստիան Կուրզին եւ ֆինն Անթի Հակալային, պարտվեց դանիացի Ջիմ Պետերսոնին: Բրոնզե մեդալի համար մրցապայքարում հայ ըմբիշն առավելության հասավ Գերմանիայի ներկայացուցիչ Ռամսին Ազիզսիրի նկատմամբ:

Մինչեւ 96 կգ քաշայինների մրցավեճում ուժեղագույնը Լոնդոնի օլիմպիադայի բրոնզե մեդալակիր Արթուր Ալեքսանյանն էր: Քաշային այդ կարգում մեդալների համար մրցագորգ էին դուրս եկել ընդամենը 6 ըմբիշներ: Հաղթելով գերմանացի Ռոլֆ Լինկեին եւ ֆինն Տիմո Կալիոյին, Արթուրը մտավ եզրափակիչ, որտեղ մրցակիցը Հայաստանի հավաքականի մյուս ներկայացուցիչ Սարգիս Տոնոյանն էր: Վերջինս եզրափակիչի ճանապարհին առավելության էր հասել ավստրիացի Դանիել Գաստլի եւ գերմանացի Պետեր Օհլերի նկատմամբ: Վճռորոշ գոտեմարտում առավելությունն օլիմպիադայի մրցանակակիր Արթուր Ալեքսանյանի կողմն էր, որն էլ հաղթելով 6-0 հաշվով, դարձավ մրցաշարի հաղթող: Սարգիս Տոնոյանն արժանացավ արծաթե մեդալի:

# Հայաստան-Լյուքսեմբուրգ հանդիպումը չի հեռարձակվելու որեւէ հեռուստաալիքով

Փետրվարի 5-ին Ֆրանսիայի Վալանս քաղաքում կայանալիք Հայաստան-Լյուքսեմբուրգ ընկերական հանդիպումը չի հեռարձակվի «Արմենիա» հեռուստաընկերությամբ: Հանդիպումը կսկսվի Երեւանի ժամանակով ժամը 22:45-ին: Խաղը կսպասարկի Ֆրանսիայի մրցավարական բրիգադը:

«Արմենիա» հեռուստաընկերությունը խաղի չհեռարձակման պատճառների մասին ֆուտբոլասերներին տեղեկացրել է հետեւյալ հայտարարությամբ. «Հաշվի առնելով վերջին օրերին համացանցում տեղ գտած մի շարք քննարկումները, որոնք կապված են Հայաստան-Լյուքսեմբուրգ ֆուտբոլային հանդիպման հեռարձակման հետ, կարեւոր ենք համարում տեղեկացնել, որ Հայաստան-Լյուքսեմբուրգ ընկերական հանդիպումը չի հեռարձակվելու ոչ մի հեռուստաալիքով, քանի որ խաղը չի նկարահանվելու եվրոպական ոչ մի հեռարձակող կազմակերպության կողմից, եւ ազդանշանը չի բարձրացվելու արբանյակ: Հետեւաբար, անհիմն ենք համարում սույն հարցի շուրջ որոշ անձանց կարծիքն ու վերաբերմունքը, ովքեր պատեհ ու անպատեհ առիթներով շահարկում են Արմենիա TV-ի անունը:

Արմենիա TV-ն մինչ այս հեռարձակել է Հայաստանի ազգային հավաքականի այն բոլոր հանդիպումները, որոնց հեռուստատեսային ազդանշանը բարձրացվել է արբանյակ, եւ փորձել ապահովել թե տեղեկատվական հոսքի, եւ թե բուն հանդիպումների հեռարձակման մաքսիմալ բարձր որակը:

Գտնում ենք, որ մեր ֆուտբոլասերները, իսկ մենք մեզ դասում ենք նրանց շարքին, շատ լավ հասկանում են վերոնշյալ խնդիրները եւ ըմբռնումով են մոտենում հարցին»:

# «Իմպուլսը» հաղթեց «Ուրարտուին»

Արարատի «Այգ» մարզաբազայում ուսումնամարզական հավաք անցկացնող Դիլիջանի «Իմպուլսը» ստուգողական խաղում ուժերը չափեց նորաստեղծ «Ուրարտուի» հետ: Դա թիմերի 2-րդ մրցավեճն էր: Առաջինում գրանցվել էր մարտական ոչ-ոքի՝ 2-2: Այս անգամ հաջողությունն ուղեկցեց փորձառու իմպուլսցիներին, որոնք 3 անպատասխան գնդակ ուղարկեցին մրցակցի դարպասը: 2 անգամ աչքի ընկավ Արթուր Բարսեղյանը, մեկ գոլ էլ խփեց թիմի մակեդոնացի կիսապաշտպան Ֆիլիպ Տիմովը:

Բացի Տիմովից, «Իմպուլսում» մարզվում են նաեւ թիմի մյուս 3 լեգեոնականները՝ Իլիասու Ալհասանը, Դիեգո Կաստրոն եւ Մաքսիմ Պուզանովը: Իսկ ահա թիմի ավագ Նարեկ Դավթյանը մեկնել է Մյունխեն՝ բուժզննման: Թիմում փորձաշրջան է անցնում 18-ամյա Անդրանիկ Շահգելդյանը, որը մինչ այդ հանդես է եկել «Միկայում» եւ «Ուլիսում»: Հենց վերջինիս հետ էլ փետրվարի 5-ին «Իմպուլսը» կանցկացնի ստուգողական հաջորդ հանդիպումը:

«Ուրարտուն» շուտով կմեկնի Մոսկվա, այնուհետեւ ուսումնամարզական հավաք կանցկացնի Բարսելոնում: Թիմի գլխավոր մարզիչ Արմեն Սանամյանը շարունակում է ֆուտբոլիստների փորձարկումը:

# Յամադոու Կեյտան համալրեց «Արարատը»

Մալիացի հարձակվող Յամադոու Կեյտան 1,5 տարվա պայմանագիր է կնքել «Արարատի» հետ: Կեյտան անցած մրցաշրջանում հանդես էր գալիս Կապանի «Գանձասարում»: «Արարատի» գլխավոր մարզիչ Աբրահամ Խաշմանյանը լավ ծանոթ է ֆուտբոլիստի խաղային որակներին, քանի որ 2012-ի մրցաշրջանի սկզբում մարզում էր «Գանձասարը»:

«Արարատն» արդեն ավարտել է ուսումնամարզական առաջին հավաքը, որն անցկացվեց Ծաղկաձորում: Այդ փուլում հիմնական ուշադրությունը դարձվել է տղաների ֆիզիկական որակների բարելավմանը, արագաուժային հատկանիշների զարգացմանը: Փետրվարի 6-ից «Արարատը» կսկսի ուսումնամարզական 2-րդ հավաքը: Այն նախատեսված է Սոչիում, որտեղ թիմին կմիանա հայ հարձակվող: Եթե Սոչի մեկնել չհաջողվի, հավաքը կանցկացվի Բաթումում:

ՇԱԽՄԱՏ

# Վարուժան Հակոբյանը Ամերիկա աշխարհամասի շախմատի չեմպիոն

**Գրոսմայստեր Վարուժան Հակոբյանը Բրազիլիայում անցկացված համաամերիկյան 9-րդ թիմային առաջնությունում ԱՄՆ-ի հավաքականի կազմում նվաճել է չեմպիոնի կոչում: Հակոբյանը հանդես է եկել երկրորդ խաղատախտակի վրա: Մրցաշարին մասնակցել են 28 շախմատիստներ :**



**Հակոբյանը 2012-ի դեկտեմբերին «Սիեթլ» ակումբի կազմում նվաճել է նաեւ շախմատի Ամերիկայի թիմային չեմպիոնի կոչումը: Գրոսմաստերն իր ակումբում հանդես է եկել առաջին խաղատախտակի առջեւ:**

# Դարչինյան-Դոներ մենամարտը հավանաբար կայանա

**Չի բացառվում, որ Վախթանգ Դարչինյանը ռինգում կրկին մենամարտի WBO-ի վարկածով 1-ին կիսամիջինքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն, 30-ամյա ֆիլիպինցի Նոնիտո Դոների հետ: Այս մասին հայտարարել է Դոների պրոմոութեր Բոբ Արումը:**

**Ֆիլիպինցի բռնցքամարտիկն իր հաջորդ մենամարտը կանցկացնի ապրիլի 13-ին: Այդ օրը նա ԱՄՆ-ում պետք է մենամարտի առաջին կիսամիջինքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն, կուբացի Գիլերմո Ռիգոնդոյի հետ: Սակայն հնարավոր է, որ այդ մենամարտի փոխարեն Նոնիտո Դոները նախընտրի մրցել Վախթանգ Դարչինյանի հետ:**

**Հիշեցնենք, որ Վախթանգի եւ Դոների մենամարտը կայացել է 2007-ի հուլիսի 7-ին ԱՄՆ-ում: Այդ մենամարտն անհաջող դասավորվեց Վախթանգի համար, որը 5-րդ ռաունդում անսպասելիորեն հայտնվեց նոկաուտում: Հայ բռնցքամարտիկն այդ պարտությունից հետո բազմիցս մարտահրավեր է նետել Դոներին, հայտարարելով, որ պատրաստ է մրցակցի յուրաքանչյուր պայմանն ընդունել, միայն թե հանդիպումը տեղի ունենա: Սակայն ֆիլիպինցի բռնցքամարտիկը մշտապես խուսափել է Դարչինյանի հետ մրցամարտից:**

**Հունվարի 7-ին 37-ամյակը նշած Վախթանգ Դարչինյանը բնավ էլ մտադիր չէ հրաժեշտ տալու բռնցքամարտին: Նա լի է վճռականությամբ քաշային տարբեր կարգերում աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու: Պրոֆեսիոնալ ռինգում Դարչինյանը 44 մենամարտ է անցկացրել, որից 38-ում հաղթել է, մեկն ավարտել է ոչ-ոքի, կրել է 5 պարտություն: Ընդ որում միայն մեկ անգամ է Վախթանգը նոկաուտի ենթարկվել: Իր վերջին մենամարտը հայ բռնցքամարտիկն անցկացրել է անցյալ տարվա սեպտեմբերի 29-ին՝ 10-ռաունդանոց մենամարտում միավորներով հաղթելով Լուիս Օռլանդո դել Վալեին:**

**30-ամյա Նոնիտո Դոները պրոֆեսիոնալ ռինգում 32 մենամարտ է անցկացրել, որից 31-ում հաղթել է, կրել է ընդամենը մեկ պարտություն:**




# Արզումանյանը փորձաշրջան կանցնի «Ակտոբեում»



**Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի պաշտպան Ռոբերտ Արզումանյանը մեկնել է Թուրքիա, որտեղ փորձաշրջան կանցնի ղազախական «Ակտոբեի» կազմում:**

**Վերջինս հետաքրքրվում էր Ռոբերտի ծառայություններով, ուստի հրավիրել է մարզումների: Փետրվարի 1-ին «Ակտոբեն» ստուգողական հանդիպում կանցկացնի մոլդովական «Զիմբրուի» հետ: Նախատեսվում է, որ Արզումանյանը կմասնակցի այդ հանդիպմանը: Իսկ հաջորդ օրը նա Թուրքիայից կուղեւորվի Ֆրանսիայի Վալանս քաղաք, որտեղ փետրվարի 3-ից Հայաստանի ազգային հավաքականը նախապատրաստվելու է 2 օր անց Լյուքսեմբուրգի ընտրանու հետ կայանալիք ընկերական հանդիպմանը:**

**Վերջին շրջանում Արզումանյանը Մոսկվայում էր եւ նոր թիմ էր որոնում: Նրա տրանսֆերը պատկանում է լեհական «Յագելոնիայի», որի հետ ներկայումս բանակցում է «Ակտոբեն»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Բրահիմի. «Սիրիան մասնատվում է. պետք է անհապաղ գործել»

## *ԱՄՆ-ը կհատկացնի 155 մլն դոլարի օգնություն*



Սիրիայի գծով ՄԱԿ-ի եւ Արաբական լիգայի հատուկ ներկայացուցիչ Լախդար Բրահիմին երեկ ՄԱԿ-ի ԱԽ-ում ելույթի ժամանակ հայտարարել է, որ «Սիրիան մասնատվում է»: Նա ԱԽ անդամ պետություններին հորդորել է անհապաղ քայլեր ձեռնարկել եւ հնարավորինս շուտ միասնական լուծում գտնել Սիրիայի հակամարտության համար: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Բացի դրանից, Բրահիմին առաջարկել է փոփոխել հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ Ժնեւում անցյալ տարվա հունիսին ձեռք բերված համաձայնությունը: Նրա խոսքերով, դրա պայմանները ներկայումս արդեն այժմեական չեն եւ պետք է ազատվեն «անմիանշանակ բնորոշումներից»: Բրահիմիի կարծիքով, համաձայնության վերանայումը պետք է վերաբերի մասնավորապես Սիրիայում «լիիշխան անցումային կառավարության» ստեղծմանը: Նա հայտարարել է, որ անհրաժեշտ է վերանայել «լիիշխան» հասկացության բնորոշումը, ավելացնելով, որ նախագահ Բաշար Ասադը չպետք է որեւէ դեր խաղա իշխանափոխության հարցում:

Միեւնույն ժամանակ հաղորդվում է, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման որոշել է հավելյալ 155 մլն դոլարի օգնություն հատկացնել Սիրիային: Այս կապակցությամբ USA Today թերթը նշում է, որ Սիրիայի հակամարտության սկզբից ի վեր ամերիկացիների օգնության ընդհանուր գումարը կկազմի 365 մլն դոլար:

«Մենք պատրանքներ չունենք. առաջիկա օրերը շատ ծանր են լինելու: Սակայն պարզ է, որ վարչակարգն ավելի ու ավելի է թուլանում եւ կորցնում է երկրի վերահսկողությունը», հայտարարել է Օբաման:

Վերջերս Օբամային հաճախ են քննադատում Սիրիայի հակամարտությանն անմիջականորեն չմիջամտելու համար: Ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ եվրոպական երկրները հակամարտությանը չմիջամտելու իրենց դիրքորոշումը բացատրում են նրանով, որ իրենք չունեն իրադրության վրա ազդելու ոչ հնարավորություն, ոչ էլ օրինական հիմունքներ: Այսպես, The New Republic հանդեսի հունվարի 27-ի համարում հրապարակված հարցազրույցում Սիրիային վերաբերող հարցին պատասխանելիս Օբաման հայտարարում է. «Սիրիայի իրադրության կապակցությամբ ես ինքս ինձ պետք է հարց տամ՝ կկարողանա՞նք արդյոք ինչ-որ բան փոխել, դա չի՞ հանգեցնի արդյոք բռնության սաստկացմանը կամ քիմիական զենքի օգտագործմանը»:

Պ. Ք.

# Օբաման արագացնում է ներգաղթյալների խնդրի լուծումը



Լաս Վեգասում ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Կոնգրեսին հորդորել է արագացնել 11 մլն անօրինական ներգաղթյալների խնդրի լուծումը, որոնք երկիր են թափանցել Մեքսիկայի սահմանից: Նախագահի վերընտրվելուց հետո Օբամայի առաջին ելույթը փաստորեն նվիրված էր ներգաղթյալների խնդրին:

«Ժամանակն է իրականացնելու ներգաղթի համապարփակ բարեփոխում, որը հիմնված կլինի ողջամտության վրա: Դա հարկավոր է անել անհապաղ: Կոնգրեսը պարտավոր է համապարփակ մոտեցում գտնել մեր երկրի 11 մլն չգրանցված ներգաղթյալների կարգավիճակի խնդիրը լուծելու համար», հայտարարել է նախագահը:

Շատ տարիների ընթացքում առաջին անգամ դեմոկրատներն ու հանրապետականները պատրաստ են համատեղ լուծել խնդիրը: Երկու կուսակցությունների մի խումբ սենատորներ առաջարկել են բարեփոխում, որը համապատասխանում է ավելի վաղ նախագահի առաջարկած ծրագրին:

Մեկնաբաններից շատերը կարծում են, որ տվյալ հարցում հանրապետականները դեմոկրատների տեսակետն ընդունել են այն բանից հետո, երբ վերջիններս զանգվածաբար պաշտպանություն հայտնեցին բարեփոխմանը: Օբամայի հաղթանակի մեջ էական դեր խաղացած նահանգներից մեկը Նեւադան է, որտեղ գտնվում է Լաս Վեգասը:

Սակայն դեմոկրատների եւ հանրապետականների մոտեցումներում տարբերությունները դեռ պահպանվում են: Նախագահի կողմնակիցների համար առավել կարեւոր է լատինաամերիկացի անօրինական ներգաղթյալներին քաղաքացիություն շնորհելը, մինչդեռ հանրապետականները պահանջում են նախ եւ առաջ ամուր փակել Մեքսիկայի սահմանը:

Օբամայի առաջարկության դեմ հանդես ենք գալիս արհմիությունները, վախենալով, որ բարեփոխումից հետո ցածր որակավորում ունեցող միլիոնավոր մարդիկ կկորցնեն աշխատանքը: Իրավապաշտպանները եւս չեն շտապում պաշտպանել նախագահի ծրագիրը, կարծելով, որ այն կհանգեցնի ներգաղթյալների վերահսկողության խստացմանը:

# Իսրայելը մասամբ սառեցրել է պաղեստինցիների փողերը

Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն որոշել է Պաղեստինյան ինքնավարությանը փոխանցել 400 մլն շեքել, որը դեկտեմբերին ստացվել էր որպես հարկերի եկամուտ: Այդ մասին հաղորդում է «Ջերուսալեմ փոստ» թերթը՝ վկայակոչելով Նաթանյահուի կառավարության աղբյուրներ:

Իսրայելն այդ միջոցները սառեցրել էր ի պատասխան ՄԱԿ-ում 2012-ի նոյեմբերին Պաղեստինի՝ որպես դիտորդ պետություն ճանաչվելուն: Երուսաղեմը ի վերջո համաձայնեց գումար փոխանցել, քանի որ ինքնավարությունը ֆինանսական լուրջ դժվարությունների մեջ է: Թերթը նշում է, որ պաղեստինցիների փողերի ապասառեցման հարցը բարձրացվել էր Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ-ի ներկայացուցիչների հետ Նաթանյահուի զրույցների ժամանակ:

Թերթի աղբյուրները պնդում են, որ այսուհետեւ Պաղեստինյան ինքնավարությանը գումարներ կփոխանցվեն 1-2 ամիսը մեկ:

ՄԱԿ-ում Պաղեստինի դիտորդ պետության կարգավիճակ ստանալուց հետո Իսրայելը ոչ միայն սառեցրել էր ինքնավարության հաշիվների միջոցները, այլեւ հրեա վերաբնակների համար 3000 տան շինարարություն սկսել Այսրհորդանանում եւ Արեւելյան Երուսաղեմում:

Պաղեստինյան ինքնավարությունը Իսրայելին պարտք է ավելի քան 6 մլրդ շեքել, այդ թվում՝ ջրի եւ էլեկտրականության համար՝ 900 մլն, աշխատավարձերի վճարման ֆոնդերի համար՝ 700 մլն:

**ՄԱՐԴԱՀԱՄԱՐ**

# Հակառակ ընդհանուր թիվ աճին՝ նվազում է Թուրքիայի արեւելյան քաղաքների բնակչությունը

**2012-ին Թուրքիայի բնակչությունը նախորդ տարվա համեմատ 1,2 տոկոսով աճել եւ հասել է 75 միլիոն 627 հազարի: 2011-ին բնակչության թիվը, ըստ Թուրքիայի վիճակագրության ինստիտուտի անցկացրած վերջին մարդահամարի, որի արդյունքները, «Դունյա բուլթենի» կայքէջի վկայությամբ, հրապարակվել են հունվարի 29-ին, եղել է 74 միլիոն 724 հազար:**

**Մարդահամարի արդյունքներով՝ աճել է նաեւ երկրի ամենաբազմամարդ քաղաքների բնակչությունը, որոնցից Ստամբուլինը՝ 1,7 տոկոսով եւ հասել 13 միլիոն 854 հազարի: Ի դեպ, այս ցուցանիշը հավասար է երկրի ընդհանուր բնակչության 18,3 տոկոսին: Այդ ընթացքում Անկարայինը աճել է 6,6 տոկոսով եւ դարձել 4 միլիոն 965 հազար, 4 միլիոն 5 հազար բնակչություն ունեցող Իզմիրում աճը կազմել է 5,3 տոկոս: Աճել է նաեւ Բուրսայի եւ Ադանայի բնակչությունը, համապատասխանաբար հասնելով 2 միլիոն 688 եւ 2 միլիոն 125 հազարի:**

**Հակառակ նշված քաղաքների՝ արտագաղթի պատճառով բնակչության կորուստ են ունեցել Սեւ ծովի առափնյա քաղաքներից Սինոփն ու Սամսունը, ինչպես նաեւ Չորումը, Ամասիան, Յոզղաթը, Սվազը: Բնակչության թվի կրճատումը հատկապես նկատելի է դարձել արեւելյան այնպիսի վիլայեթներում, ինչպիսիք են Արդահանը, Կարսը, Աղրին, Մուշը, Էրզրումը եւ Բայբուրթը: Ի դեպ, Բայբուրթը Բաբերդի աղավաղված ձեւն է եւ 75 հազար 797 բնակիչով Թուրքիայի ամենանոսր բնակեցված վիլայեթը:**

Հ. Չ.

# Հրվ. Կորեան արձակել է առաջին արհեստական արբանյակը

**Հարավային Կորեան հաջողությամբ արձակել է իր առաջին գիտական արբանյակը: Այն ուղեծիր է դուրս բերվել կորեական KSLV-1 մղիչ հրթիռով: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ հրթիռը պատրաստվել էր ռուսաստանցի մասնագետների օգնությամբ:**

**Հրթիռը մեկնարկել է կորեական «Նարո» տիեզերադաշտից: Հարավային Կորեան դարձավ աշխարհի 13-րդ երկիրը, որն արհեստական արբանյակ է արձակել սեփական տարածքից: Հարավկորեացիները տիեզերքում արդեն ունեն մեկ տասնյակ թռչող սարքեր, բայց դրանք բոլորը ուղեծիր էին դուրս բերվել օտար տարածքից եւ օտարերկրյա մղիչ հրթիռների օգտագործմամբ:**




# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպության ժողով գումարելու մասին**

Ի կատարումն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների՝ հրապարակում ենք հայտարարություն առ այն, որ՝

Համաձայն հիշյալ օրենքի՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ (այսուհետ՝ Բյուրո) խորհրդի մեկ անդամ ընտրում են սպառողների իրավունքները պաշտպանող, առնվազն երեք տարվա պետական գրանցում ունեցող կազմակերպությունները՝ իրենց միջեւ ձեռք բերված պայմանավորվածությամբ՝ երկու տարի ժամկետով:

Այդ ընտրությունը կատարելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը սույն թվականի փետրվարի 21-ին ժամը 10:00-ին ՀՀ կենտրոնական բանկի շենքում՝ ք. Երեւան, Վ. Սարգսյան 6 հասցեում, կազմակերպում է ժողով:

Բոլոր այն կազմակերպությունները, որոնք բավարարում են վերոհիշյալ պահանջներին եւ ցանկանում են մասնակցել ժողովին, պետք է մինչեւ սույն թվականի փետրվարի 18–ը այդ մասին գրավոր հայտ ներկայացնեն ՀՀ կենտրոնական բանկ՝ հայտին կցելով պետական գրանցման վկայականի եւ կանոնադրության պատճենները:

Այն կազմակերպությունները, որոնք հիշյալ ժողովում ընտրվելու համար մտադիր են ներկայացնել Բյուրոյի խորհրդի անդամի թեկնածու, հայտին պետք է կցեն նաեւ այդ թեկնածուի անունը եւ ազգանունը, տեղեկություններ նրա կրթության եւ աշխատանքային փորձի վերաբերյալ, փոխկապակցվածությունը Բյուրոյի անդամների հետ (բացակայության դեպքում՝ նշում փոխկապակցվածության բացակայության մասին), նրան առաջադրող Բյուրոյի անդամի (անդամների) անվանումը (անվանումները) եւ վերջինի (վերջինների) հավաստումն առ այն, որ ներկայացված թեկնածուներն իրենց մասնագիտական կարողություններով ի վիճակի են ապահովել օրենքով եւ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված խորհրդի լիազորությունների պատշաճ իրականացումը եւ առկա չեն Բյուրոյի կանոնադրության 123-րդ կետով սահմանված սահմանափակումները:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ*

# «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ հարգելի հաճախորդներ

Տեղեկացնում ենք, որ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ «Շենգավիթ» (Գ.Նժդեհի փողոց, 8 շենք, հ.52) մասնաճյուղի վերանորոգման աշխատանքների ավարտը երկարաձգվում է մինչեւ ս.թ. մարտի 15-ը:

Վերընշված մասնաճյուղի Ֆիզիկական իրավաբանական անձանց սպասարկումը կիրականացվի հետեւյալ հասցեով՝

**▼ Թիվ 35 մասնաճյուղ եւ հասցե. ք.Երեւան, Շենգավիթ համայնք, Բագրատունյաց փ., հ.13 շենք, հ.113:**

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք զանգահարել Բանկի միասնական տեղեկատվական կենտրոն +(374 8000) 87-87 հեռախոսահամարով:

ՎՏԲ-Հայաստան Բանկի ղեկավարությունը հայցում է Ձեր ներողամտությունը պատճառված ժամանակավոր անհարմարությունների համար:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության 30.1.2013, գինը՝ 100 դրամ, տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: